Թ	30	17	Բ. 2. ակ. Ա. օր պահոց Յիսու Հրո. Ա. Կ. Դ. Բ. Հարցն մե- րոց Աստուած օր 'ի նեղ Լ. Անդրեէ Առաքելոյն:	14	54
Ժ	1	18	Գ. 2. Բ. Բ. օր պհց. Յիսու Հրո. Ա. Կ. Դ. Բ. Գ. Օրհ. նեալ ես յաւիտեան: Լ. Գեղեթեթեր:	12	52
Ժ	2	19	Գ. 2. Բ. Գ. օր պհց. Յիսու Հրո. Ա. Կ. Դ. Բ. Որ յա. մենայնի ցուցեր:	10	50
Ժ	3	20	Ե. 2. Գ. Գ. օր պհց. Յիսու Հրո. Ա. Կ. Դ. Բ. Գ. Զ. Ըմար. տապէս: (Յերեկոյն նախապօծակ'ակ. Որ նախիմաց):	17	57
			⊕ Լ. Լ. Ժ. 16. Բ. 33: Խառնակ օր		
Ժ	4	21	Քնար. Գ. Ե. օր պհց. Յիսու Ընծայումն Ս. Աստուա. ծածնի 'ի տաճարն: Եւ Յ. Օրհ. Գ. Ե. Երպեցէք' Իւր սար: ՀԲ. Դ. Եր Սիծես	17	57







2 1. 0

ՆՈՅԵՄԲԵՐ

S 9



(Հրաշատառ և հանդիսաւոր  
Ս. Պատարագ 'ի Վերայ Գե-  
րեղմանին ստաբ Աստուա-  
ծածին) :

27

5 22

ՇԲ. ԴՅ. Սրբոցն՝ Գրիգորի  
Սքանչելագործին, Նի-  
կողայոսի հայրապետին,  
և Միւռանայ Եպիսկոպո-  
սին: Օրհ. ակ. Որք զար-  
դարեցին՝ իւր սար: Մի՞-  
բՅ. Որ լուսով: ՀՃԲ. ւՅ.  
Սուրբ եւ Տէր. և Երկ-  
նաքաղաքացին:

18

5A

28

6 23

Ք կիր. Դի. Ա. Յիսնակաց:  
Ա. Գ. Օրհ. Դի. Յաղթա-  
կան: ՀԵՅ. Յար. ւՅ. Բ. Օրհ-  
նեալ եւ Տէր: ՀՃԲ. Դի.  
Հրեշտակացն դարք. և  
Հրեշտակ. բո: Հարանի՛ս:  
Լ. Նիկողայոսի հայրապե-  
տին՝ պաշտպանին նաւա-  
վարաց: ՏՃ. Ետրագ  
սէօթի-տի փորձուհաւ:

19

5A

ԸՄՅՌՆԱՂ







Հ Լ 0

ՄՈՒՀԱՐՐԷՄ

Տ Գ

ԺԷ

7 24

ԲԶ. աՅ. Արքոց կուսանայն՝  
 Յուլիանեայ եւ վլասի-  
 լուհւոյ : Օրհ. Մար. աՅ.  
 Ժողովեալքս : Հրո. Մար.  
 Բի. Օրհնեմք զքեզ : Մի\*  
 և ՀՏբ. դի. Յիշատակ Քսի  
 Լ. ԱՏբբոսիոսի էպիսկոս :

Ը. Ը.

ԺԸ

8 25

ԳԶ. աի. Արնը ունկիանոսի  
 քահանային եւ սրբոցն՝  
 Տարազրոսի, Պրոսիոսի,  
 Անդրանիկոսի, Ոնեսի-  
 մեայ եւ այլոց աշակեր-  
 տացն սրբոյն Պողոսի : Օրհ.  
 դի. Իմաստու թիւն երկն.  
 Իւր սար : Մի\* և ՀՏբ. աի.  
 Աշակերտք Քրիստոսի :  
 Լ. Յղութիւն Ս. ԱՏածնի :

ԸՎ ԸՎ

ԺԹ

9 26

ԴԶ. ԲՅ. Պհ.ք : Հրո. Ա.պ. դՅ.  
 Լ. Տէր Աստուած մեր :

ԸԸ ԸԸ

ԺՐ

10 27

ԵԶ. Բի. Արքոցն՝ կղեմայ  
 հայրապետին եւ Բագա-  
 բատայ Տառսմենոյ եպիս-  
 կոսոսին : Օրհ. Մար. Բի.  
 Ծնորհեա մեզ : Հրո. Մար.

ԸԸ ԸԸ





43. Որ զանչափքու Միտ.  
 և ՀՏԲ. 43. Մանկոււնքնոր:
- Դ 11 28 Ուր. 43. Պաւք: Հրո. Հան. Ե՛.  
 Ե՛. Որ Թաղաւորոյ Ես: Միտ. Խաչի Դ Յայնէն: (Յերէկոյին նախարօնաչի՝ 43. Երանելի սուրբ):
- Ե Կ. Գ. Ժ. Լ. Բ. 47: փոփոխական եցանակ
- Խ 12 29 ԽՇԲ. 41. Սրբոյ ԱՌԱՔԵ. ԼՈՑ Է ԱՌԱՋԻՆ ԼՈՒ. ՍԱԻՈՐԶԱՑՆ մերոյ ԹԱ. ԴԵՈՍԻ Է ԲԱՐԹՈՒՂԻՄԷ. ՈՍԻ: ՕՐԿ. 43. Երանելի սուրբ Աւար. Խար սար: Թագ. յաւ: Ա յօր գառք: Միտ. աչ. Աշակերտք: ՀՏԲ. աչ. Սուրբ Ես Տէր. Ե Ի քէն հայցեմք:
- ԻԲ 13 30 ԽԿԻՐ. ԴՅ. Բ. Յիսնակայ: Ա-Գ. ՕՐԿ. ԴՅ. Օրհնես. յուք: Հրո. Յար. աչ. Գ. Անակիղքն: ՀՏԲ. ԴՅ. Որ

Ե՛ Ե՛

Ե՛ Ե՛

Ե՛ Ե՛

Faint, illegible text at the top of the page, possibly a title or header.



Second block of faint, illegible text, likely a subtitle or a section header.

Main body of faint, illegible text, appearing to be several lines of a document or list.

Ի վերջ ես: Հարանիս:  
 Յ. Ա՛րքէի Արարելոյն:  
 Հր. Խանուհիս՝ որ է Գան,  
 Կիւ պայրածը:



ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

ՏՃ. Քէանուհի է ԱԿԼՑ

ԻԴ 14

1 ԲԶ. ԴԻ. Արքոցն՝ Գեներալիսի ԸՄ ԳՄ  
 եպիսկոպոսին և Մերկե-  
 րիսի զինաւորին. Յա-  
 կովկայ և Իրաւափառայ:  
 Օրհ. Մար. ԴԻ. Ի յի.  
 շատակաւ Հրո. Մար. ԳԻ.  
 Չինուորու թիւնք: ՄԻԿ.  
 և ՀԵ. աջ. Չինաւորն  
 Քրիստոսի:

ԻԴ 15

2 ԳԶ. աջ. Արքոցն՝ Կուռ. ԸՂ ԳՂ  
 ներլիսի հարիւրապետին







Հ Լ 0

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Տ Գ

և Շմաւանի ազգականին  
 Քրիստոսի և Պօղիկաբայա-  
 սի հայրապետին Զմիւռ-  
 նիոյ և սրբոց վկայիցն՝  
 որք յԱրեւելս կատարե-  
 ցան: Օրհ. Մարտ. աջ. Ժ.՝  
 զովկաւքս: Հրո. ՂԾՅԹ.  
 նասնիցն աստ՝ Դի. Որ Դի  
 հօրէ: Մի. և ՀԺ. աջ.  
 Աշակերտք Քրիստոսի:

ԻԷ 16

3

ԴԶ. աջ. Պհ.ք: Հրո. Ա.ո. ԴԶ.  
 Է. աշո. Որ զերիս ման,  
 կուենն:

ԲԳ

ԲԳ

Տօժ. Բաղոյ (օր 30):

ԻԸ 17


4

ԵԶ. ԲԶ. Արոց հարցն Է-  
 դիպտացւոց՝ Պօղոսի,  
 Պօղայ, Մակարայ,  
 Եւագրի, Յովհաննու  
 Գբնեցւոյն, Յովհաննու  
 կարճահասակին, Նեզո-  
 սի, Արսենի, Արիանու,  
 Դանիելի, Սրապիոնի,  
 Մակարիոսի, Պմենի և  
 այլոց սրբոց Հարց: Օրհ.

Բ.

Զ.





այ. Որ գերազանցեալ.  
 Իւր սար: Մի\*. և ՀՏ. ՔՅ.  
 Պարծանք եկեղեցւոյ:

● Ծ. Լ. Ժ. 14. ր. 51.  
 Չիւնաբեր հոցմուներ

ԻԷ 18 5 Ուր. Քի. Պահ.բ: Հոյ. Հան.  
 Քի. Արարիչ և մարդասէր:  
 Մի\*. Խալի Դ Յայնէն.  
 Յ. Հօրն Սաբայի:  
 ՏՃ. Սեֆեր ( օր 29 ):

ԻԷ 19 6 Շք. ԳՅ. Սրբոյն Նիկողայո.  
 սի Զմիւռնացւոյ սքան.  
 չեւադործ հայրատեալին:  
 Օրհ. աի. Որք զարդարե.  
 ցին՝ Իւր սար: Մի\*. Ստեղծ  
 րի. Հիացան անմարմինքն:  
 ՀՏ. այ. Սուրբ ես Տէր.  
 և Երկնաքաղաքացին:  
 Յ. Նիխուլայոսի հայրատեալին,  
 պաշտօտնին նաաւաւորաց:  
 Հր. Թեբեթ ( օր 29 ):

ԻԷ 20 7 Ք Կիր. Գի. Գ. Յիանակաց:  
 Ա. Գ. Օրհ. Գի. Երգեցէք:



Հրո. Յար. ԲՅ. Բ. Որ թա.  
գաւորդ ես : ՀՏԲ. ԳԻ.  
Առեալ և մեր :  
Բարեկէնդան Ս. Յանձնապ  
պահոյ :

ԲԶ. ԴՅ. Պահ.ք: Արքոցն՝  
Մինասայ, Երմոզինեայ,  
Գրաբոսի եւ կամուոր  
աղքատացն Յովհաննու  
և Ալէքսիանոսի : Օրհ.  
Մար. ԴՅ. Ա. յօր յիշա.  
տակ : Հրո. Մար. ԲԻ. Որք  
ի մարտի : ՄԻ\*. և ՀՏԲ.  
Մարտիրոսայ :  
( Յերեկոյի՛ն Նախաթմաի .  
այ . Որ նախխմայ ) :  
Լ. Թո՛ւմայի առաքելոյն :

ՔԱՂՈՅ

ՔԳ. Զ. ԴԻ. Պհ.ք: Յղա.թիւն  
Ս. Ա. Տաճնի ՚ի յԱննայէ :  
Լա Յ. Օրհ. ԳԻ. Երգեցէք.  
Խր սար : ՀՏԲ. ԴՅ. Նորսիօն :  
Յայտ. Գաղոյ (օր 30) :



Զմեռնամուտս և արեւադարձ  
 Այծեղևեր : Յերեկն սխանի  
 երիարէլ և գիշերն իարձանալ :  
 Տճ . Ինգիլսպու շիկեւի .  
 իամ . ելիկիւ արդային՝ որ  
 է սիլիքն քառասուն առաքյ  
 առաջնոյ ճասին յՆերսն՝ և  
 իւր Գարագուշ (Չեմկերի) :  
 Կիւն արեօնիւմիւ Փոսր-  
 Րոսնաուց :

(Հրաշագիտաւ և հանդիսաւոր  
 Ս. Պարտարագի՛ ՚ ՎերայԳերեղ  
 Տանին Ս. Աստուածածնի) :

Յ Այծեղևարն . Ժ . 22 . ր . 26 :  
 Տճ . Պարճի ճէպի :

Բ 23 10 ԲԶ . ալ . Պահ . ք : Հրո . Ա . Կ . Դ ի . 7 27  
 ա . Աստուած հարցն մե :

Գ 24 11 ԵԶ . ալ . Պահ . ք : Արքայն՝ Կ 28  
 Եւսարաափոսի , Օգսնն  
 ափոսի , Եւգինէոսի , Ուլ-  
 րեսաէսի և Մարգարիո-  
 սի : Օրհ . Մար . ալ . Յա .





մենայն ժամ: Հրո. Մար.  
 ԳՅ. Որք զտանջանա: Մի.  
 և ՀՏ. Բի. Որ զհուր սիրոյ:

Ս. Ք. Ժ. 17. Բ. 54:  
 Խառնակ եցանակ

Գ 25 12

Ուր. ԲՅ. Պհք: Հրո. Հան.  
 ԳՅ. Օրհնեմք զքեզ:  
 Մի. Խալի Դ յայնէն:  
 (Յերեկոյին՝ Նախաբանակ.  
 Գի. Յաղթող և սուրբ):  
 Լ. Մնանք Տեառն Յնի:

Ը ԸԸ

Է 26 13

Շք. Բի. Սրբոցն՝ Յակոբայ  
 ՄԾբնայ Հայրապետին,  
 Մարուդէի Քգնաւորին  
 և Մելիտոսի Լպիսկոպո-  
 սին: Օրհ. Գի. Յաղթող  
 և սբ. Իւր սար: ՀՏ. աչ.  
 Սուրբ ևս Տէր. և Երկ-  
 նաբաղարացին:  
 Լ. Սաբիմնոսի նախա-  
 շնային:

Գ ԸԳ

Ը 27 14

Ք կիր. ԳՅ. Դ. Յիանակաց:  
 Ա. Գ. Օրհ. ԳՅ. Օգնական:

Ը ԸԴ





Հրո. Յար. Բի. Բ. Անսկիղբն  
Աստուած: ՀՏբ. Գի. Փա.  
աւարեալ է քո յարու:  
Հարանիք:

Լ. Յու. Աւեփարանիքն:  
ԲԶ. Գի. Արբոցն՝ Իգնատի.  
ոսի և Ադդէի հայրա.  
պետացն և Մարու թայի  
Եպիսկոպոսին: Օրհ. Մար.  
Գի. Ա. յօր հրեշտակաց:  
Հրո. Մար. ԴՅ. Որք հաղոր.  
դեցան: Մի. և ՀՏբ. ԴՅ. Որ  
հրաւիրեցեր զ. յառաջա:  
Լ. Մանյանն Բեթլէհէֆ:

Է 28 15

Վ Օ

ԳԶ. ԴՅ. Արբոցն՝ Թէոպոմ.  
պայ Եպիսկոպոսին եւ  
Թէոֆանայ վկային և շո.  
րից զինուորացն՝ Բասո.  
սի, Եւսեբի, Եւտիքի և  
Բասիլիդեայ: Օրհ. Մար.  
ԴՅ. Ա. յօր յիշատակ: Հրո.  
Մար. ԴՅ. Յուսացեալ քն:  
Մի. և ՀՏբ. Մարտիրոսաց:  
Ա. Արամ ( օր 30 ):

Է 29 16

Վ Օ



Հ Լ 0

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Տ Գ

Թ 30 17

ԴՆ. ԴԻ. Պահք: Հրո. Ադ.  
 ուր. ԴԻ. Բ. Օրհնեալ տէր  
 Աստուած :

Յ. Դանիէլ. Տարգարէի և  
 երէց Տանկուն :

17 07

Ժ 31 18

ԵՆ. ԵՅ. Սրբոց կուսանացն՝  
 Ինգոսի և Գոմնայի և  
 Գղերիկոսի քահանային  
 և երկուց բիւրուցն՝ որք  
 այրեցան յեկեղեցին Նի.  
 կոմիդացւոց: Օրհ. Մար.  
 ԵՅ. Ժողովեալքս: Հարո.  
 Մար. ԴՅ. Սուրբ Ես Տէր:  
 ՄԻ. և ՀԺ. ԴԻ. Ա. յօր  
 ընդ անմարմնացն :

Լ. Սէղբէօքրոսի Հոռվճայ  
 Կայրապէտին :

18 02

Ժ 1 19


Ուր. ԵԻ. Պհք: Հրո. Հան.  
 ԳԻ. Բանդ. Աստուած :  
 ՄԻ. Խաչի Ի Յայնէն :

Լ. Յոաննասար և Տարէմասար  
**1915** Թոռախանին ըստ Դոր  
 Տօմարի, և Տօն Տեօրէնու-  
 Ռէան Տէտուն :

19 00









☺ Լ. Լ. թ. 2. ր. 40:  
Յրտաշուհչ հոցմուհք

ԺԲ 2 20 Շբ. ԲՅ. Արբոյն նախալկայ Վ Ծ

և 'ի ֆրիտոս հաւատա-  
ցեալ անդրանիկ թագա-  
ւորին մերոյ՝ ԱՅԳԱՐՈՒ:  
Օրհ. ւի. Որ զերկնաւոր-  
իւր սար: ՀՏԲ. ւՅ. Սուրբ ես  
Տէր. և Երկնաքաղաքաւ

ԺԳ 3 21 Թ Կիր. Բի. Ե. Յիսնակայ: Վ ՕԿ

Ա. Գ. Օրհ. Բի. Փարաւօն:  
Հրո. Յար. ԳՅ. Բ. Փառա-  
ւորեալ որդի: ՀՏԲ. Բի.  
ֆրիտոս յարեաւ. Առա-  
ւօտեան. և Կանխեցին:

ԺԴ 4 22 ԲԶ. ԳՅ. Արբոյն՝ Արբա- Վ ՕԸ

համու, Խորենայ և ա-  
նարծաթ բշթկոցն՝ Կող-  
մայի և Դամիանոսի և  
Աստուածաբոյ զկային  
Օրհ. Մար. ԳՅ. Չարիական:  
Հրո. Մար. Դի. Առ քեզ  
Ա. Ծ. Մի. և ՀՏԲ. Մար:

Չ

Լ 0

ԴԵՎՏԵՐՈՆ

Տ 9

Նախապահակի . ԴՅ . Յաղթող  
գտաւ :

ԺԵ

5 23

ԳԶ . ԳԴ . Արքայն՝ Դաւթի  
մարգարէին և Յակոբայ  
Տեառնեղբայր Առաքե-  
լոյն : Օրհ . ԴՅ . Յաղթող  
գտաւ՝ Իւր սար : Թագ .  
յաւիտ . Այսօր գառք :  
Մեծ . ԴՅ . Առաւօտ խա-  
ղաղութեան : Մի . և  
ՀՏԲ . ԴՅ . Օրհնեցէք զՏէր :

19 01

ԺԶ

6 24

ԴԶ . ԴՅ . Պէք . Հոյ . Ար . ԴԴ .  
Գ . Հարցն մերոց : Նախա-  
պահակի . ԳԴ . Նահատակ :  
Յ . Ճրագալոյց Օնեղէան :  
Լ . Յայտնաբերան Տեառն :

5 70

ԺԷ

7 25

ԵԶ . ԴԴ . Արքայն Սանփան  
նստի Նախաարկաւա,  
գին և առաջին մարտի,  
բոսին : Օրհ . ԳԴ . Նահա-  
տակ . Իւր սար : Թագ .  
յաւիտ . Այսօր գառք :  
Մի . և ՀՏԲ . ԴԴ . Նախա-  
արկաւադ :

51 71





Յ. Ծնունդ Տէառն և ուարի  
 է նոյա Դիւլ և յլորսն Յոան.  
 ուարի :

ԺԵ 8 26 Աբ. աջ. Պհ. ք: Հրո. Հան. ԸԸ Կ

ԴՅ. Որ փառօք Հօր :  
 Մի. Խալի Դ յայնէն :  
 Նախաբօնի. ԴՅ. Յնծայ  
 այսօր :

Ս. Ք. Ժ. 11. Բ. 24:  
 Խառնակ օր

ԺԲ 9 27 ՇԲ. Կի. Արքոց Ա. աքեւոցն ԸԸ Կ

Պեարոսի և Պօղոսի: Օրհ.  
 ԴՅ. Յնծայ այսօր Դ-ր աւր :  
 Թագ. Կա: Ա. յօր դասք:  
 Մի. Դի. Սրէշի. Որ ար  
 փիահրաշ: ՀՏԲ. աջ. Աբ. և  
 Տէր. և Ի. քէն հայցեմք  
 Յ. Սրէիաննոսի նախալը.  
 Իայն :

Դ 10 28 ՔԱ/Բ. ԲՅ. Զ. Յիսնակաց: ԸԸ Կ

Ա. գ. Օրհ. ԲՅ. Օրհնեո.  
 ցուք: Հրո. Յար. Գի. Բ.  
 Նախայաւ խեան : ՀՏԲ.  
 ԲՅ. Ա. յօր դուարճացան :

Նախափոխակի. Դի. Որ Էնն  
յէու թեան :

Ի 11 29

ԲԶ. Բի. Արքայ Որդւոյն  
Որոտման՝ Յակովբայ Ա.  
ու արեւոյն և Յովհաննու  
Աւետարանչին : Օրհ. Դի.  
Որ Էնն յէու թեան. Իտ  
սարս թագ. յաւ. Ա. յսօր  
գասար : Մեծ. Դի. Աստ.  
ու անձամբին ամալ լուսաս  
Մի. և Հճբ. Դի. Ստեղծ.  
Որ յանստուեր :

50 70

( Հանդիսաւոր Ա. Պապա.  
բագ և Բագոր Ի Ստեղծ  
Յակովբ ) :

Բարեկէնդան Ա. Ծննդէան  
պահոց :

Ի 12 30

ԳԶ. Գի. Ա. օր պհոց. Ծննդ. :  
Հոց. Ա. Կ. Դի. Կ. Օրհ.  
նեալ Տէր :

57 77

Ի 13 31

ԴԶ. Գի. Բ. օր պհոց. Ծննդ. :  
Հոց. Ա. Կ. Դի. Ե. Օրհնեալ  
և Տէր :

57 77







**ՏԱՐԵԴԱՐՁՔ ԾՆՆԴԵԱՆ**  
**ԳՍՀԱԿ. ԵՒ ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ**  
**ԿԱՅՍԵՐԱՅ ԵՒ ԹԱԳԱԻՈՐԱՅ**

**ՅԱՆՈՒՄ**

14. - 55° Տար. Ծննդ. Վիլհելմ Բ.  
Կայսեր Գերմանիոյ :

**ՓԵՆՐՈՒՄ**

13. - 53° Տար. Ծննդ. Ֆրսինանս  
Թագա. Պուլկարիոյ :

**ՄԱՐԻ**

5. - 1° Տար. Գահա. Կոստանդին  
Թագաւորին Հելլենաց :

**ՍԱՐԻ**

8. - 75° Տար. Ծննդ. Կարոյ Բ.  
Թագա. Ռուսմանիոյ :

14. - 3° Տար. Գահակալութեան  
 ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ  
 ՄԷՀԷՄՄԷՏ ՐԷՇԱՏ Ե.  
 ԿԱՅՅԵՐ ԹՈՒՐԳԻՈՅ :
23. - 4° Տար. Գահակ. Ժորժ Ե.  
 Թագա. Բրիտանիոյ եւ  
 Կայսեր Հնդկաստանի :

### Մայիս

4. - 28° Տար. Մննդ. եւ Գահակ.  
 Ալժօնս ԺԳ. Թագաւո-  
 ռին Սպանիոյ :
6. - 28° Տար. Մննդ. Նիֆոլա Բ.  
 Կայսեր Ռուսիոյ :
10. - 48° Տար. Գահակ. Կարոյ Բ.  
 Թագա. Ռուսմանիոյ :
- 14 - 18° Տար. Թագադ. Նիֆոլա Բ.  
 Կայսեր Ռուսիոյ :
21. - 48° Տար. Մննդեան Ժորժ Ե.  
 Թագա. Բրիտանիոյ եւ  
 Կայսեր Հնդկաստանի :
26. - 47° Տար. Թագադ. Ֆրանս-  
 ետզէժ Ա. Կայսեր Աւստր-  
 սո-Հոլանդարիոյ :

28. - 11° Տար. Գահ. Բեթեր Գա-  
րաեորկէվիչ Ա. Թագա-  
ւորին Սերպիոյ :

### Յուճիս

2. - 26° Տար. Գահա. վ. իլիէլմ Բ.  
Կասեր Գերմանիոյ :
16. - 70° Տար. Ծննդ. Բեդեր Գա-  
րաեորկէվիչ Ա. Թագա-  
ւորին Սերպիոյ :
21. - 137° Տարեդարձ Անկախութեան  
Միացեալ - Նահանգաց  
Ամերիկայի (1777) :

### Յուլիս

1. - 123° Տար. Հաստատութեան Հան-  
րապետութ. Գաղղիոյ :
10. - 6° Տար. վ. երահաստատութ.  
Օսմանեան ՍԱՀԾԱՆՍ.-  
ԴՐՈՒԹԵԱՆ (1908) :
17. - 14° Տար. Գահ. վ. իֆթոր Էմ-  
մանուէլ Գ. Թագաւո-  
րին իսպիոյ :

21. - 48° Տար. Ծննդ. Կոստանդին  
Թագաւորին Հելլենաց :

### Օգոստոս

1. - 53° Տար. Գահակ. Նիֆուա Ա.  
Թագա. Գարասաղի :
2. - 27° Տար. Գահակ. Ֆերսինանս  
Թագա. Պուլկարիոյ :
5. - 84° Տար. Ծննդեան Ֆրանս -  
Եոզէժ Ա. Կայսեր Աւրս-  
տո-Հունգարիոյ :
18. - 34° Տար. Ծննդ. Վիլհելմինա  
Թագուհւոյն Հոլանսայի :
29. - 69° Տար. Ծննդ. ՕԳՈՍՏՍՓԱՌ  
ՍՈՒԼԹԱՆ ՄԷՀԷՄՄԷՑ  
ԲԷՇԱՏ Ե. ԿԱՅՍԵՐ ԹՈՒՐ.  
ՔԻՈՅ • ( Ծնեալ 1570.  
Շէվվալ 51 ) •

### Սեպտեմբեր

12. - 72° Տար. Ծննդ. Նիֆուա Ա.  
Թագա. Գարասաղի :

### Հոկտեմբեր

21. - 20° Տար. Գահակ. Նիֆոլա Բ.  
Կայսեր Ռուսիոյ :

29. - 45° Տար. Ծննդ. Վիթթոր Էմ-  
մանուէլ Գ. Թագաւորի  
Իսպիոյ :

### Նոյեմբեր

10. - 25° Տար. Գահ. Վիլհէլմինա  
Թագուհի. Հոլանսայի :

19. - 68° Տար. Գահակ. Ֆրանսն-  
Եղէժ Ա. կայսեր Աւրս-  
տրո-Հունգարիոյ :


### Դեկտեմբեր

6. - Տօն անուանակոչութեան Նի-  
ֆոլա Բ. կայսեր Ռուսիոյ :



ՆՇԱՆՔ ԿԵՆԴԱՆԱԿԱՄԱՐԻՆ

0	Υ	Խոյ	0°
1	Ϟ	Յո-Լ	30
2	Π	Երկու-որ	60
3	Ϟ	Խէյգէպէն	90
4	Ω	Ա-ի-ծ	120
5	η	Կոյս	150
6	⊥	Կշէր	180
7	⊘	Կարիճ	210
8	↔	Աշէշու-որ	240
9	↔	Այծէշէր	270
10	≈	Չրհոս	300
11	≈	Չո-հն	330



ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԵՐԵՒԵԼԻ ԱՆՑԻՑ ԱՇԽԱՐՀԻ

Ի ստեղծմանէ աշխարհի մինչև ցայժմ են ամք .	7559
Ի ջբհեղեղէն .	5077
Ի սկզբնաւորութենէ անբու թեանս Հայոց ՚ի Հայկայ .	4021
Ի գիւտոյ ապակոյ .	5554
Ի սկզբնաւորութենէ թաղաւո րութեանս Հայոց ՚ի Պարուրայ .	2663
Յերկրորդ նորոգութենէ թա ղաւորութեանս Հայոց ՚ի Վա ղարշակայ Արշակունեանց .	2063
Ի ծննդէնէ Քրիստոսի .	1914
Ի հաւատարոյ Արգարու թա ղաւորին մերոյ ՚ի Քրիստոս .	1881
Ի ծննդէնէ Լուսաւորչին .	1657
Յելիցն սուրբ Լուսաւորչին մե րոյ ՚ի վերապէն և ՚ի Լուսա ւորութենէ աղգիս .	1611
Ի շենութենէ սրբոյ Էջմիածնի .	1610
Ի Նիկիոյ սուրբ Ժողովոյն .	1589

Ի Կաստանդնուպոլսոյ սուրբ Ժողովոյն .	1533
Յեփեսոսի սուրբ Ժողովոյն .	1483
Ի գիւտոյ գրոյս մերոյ .	1502
Ի նահատակութենէ Սրբոց Վարդանանց .	1463
Ի շինութենէ Տօմարին մերոյ .	1363
Ի սկզբնաւորութենէ յաջոր- գութեան Պատրիարքութեան Երուսաղէմի 'ի Հայոց յԱբ- րահամ Եպիսկոպոսէ .	1292
Յերրորդ նորոգութենէ Թա- գաւորութեանս Հայոց յԱշո- տոյ Բագրատունւոյ .	1029
Ի շորրորդ նորոգութենէ Թա- գաւորութեանս Հայոց 'ի Լե- ւոնէ Ռուբինեանց .	716
Ի կործանմանէ Անի քաղաքին .	675
Ի գիւտոյ դիտակին .	646
Ի սկզբնաւորութենէ Թագա- ւորութեանն Օսմանեան .	614
Ի գիւտոյ կողմնացուցին .	613
Ի գիւտոյ վառօղին .	585
Ի բարձմանէ Թագաւորութեան մերոյ որ 'ի Կիլիկիայ . և 'ի գիւտոյ Թղթաշինութեան .	540



Ի գիւտոյ թնթանօթին .	534
Ի գիւտոյ Տպագրութեան	475
Ի տեղափոխութենէ Հայրապետական Աթոռոյ 'ի Սոյոյ Եջմիածին .	472
Ի տիրելոյ Տաճկաց Կ. Պոլսոյ .	462
Ի սկզբնաւորութենէ Պատրիարքութեան Հայոց 'ի Կոստանդնուպոլիս' 'ի Յովակիմայ եպիսկոպոսէ Պրուսայու .	453
Ի գիւտոյ Ամերիկայի .	423
Ի գիւտոյ անուաւոր ժամացուցի .	414
Ի սկզբնաւորութենէ տպագրութեան 'ի Հայս .	402
Ի սկզբնաւորութենէ Բողոքականութեան 'ի Լուտերէ .	384
Ի գիւտոյ շոգեշարժ մեքենայից .	225
Ի գիւտոյ օդապարիկ գնտոյն .	133
Ի գիւտոյ նշանացի հեռագրին .	123
Ի գիւտոյ շոգենաւին .	120
Ի գիւտոյ պատուաստի մարմնոյ .	117
Ի գիւտոյ վիմագրութեան .	113
Ի նորոգ շինութենէ աթոռանիստ Եկեղեցւոյն Ս. Աստուածածնի Կոստանդնուպոլսոյ .	86

Ի հաստատութենէ Ս. Փրկչի	
Ազգ. հիւանդանոցի 'ի Կ. Պոլիս	85
Ի գիւտոյ լուսանկարի .	76
Ի հաստատութենէ օրէնագրութեան Տէրութեանն Օսմանեան 'ի Կիւլհանէ .	75
Ի գիւտոյ ելէքտրական հեռագրութեան .	65
Ի հաստատութենէ Ազգային Սահմանադրութեան Հայոց .	54
Ի սկզբնաւորութենէ Ժառ .	
Իպրոցիս յերուսաղէմ .	49
Ի բացմանէ պարանոցին Սուէզի .	46
Ի վերջին դաշնագրութենէ որ 'ի Պերլին .	36
Ի գիւտոյ հեռախօսի .	33
Ի բացմանէ պարանոցին Կորնթոսի .	22
Ի գիւտոյ անթել հեռագրին .	10
Ի հաստատութենէ Հայկական Բարեգործական ընդհանուր Միութեան ( Գահիրէ - 1906 ) .	9

ՅԱԻԵԼՈՒԱԾ ՕՐԱՑՈՅՑԻ

---

ԱԿՆԱՐԿ ՄԸ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ

ՏՊԱՐԱՆԻՆ ՎՐԱՅ



# ԱԿՆԱՐԿ ՄԸ

ԵՐՈՒՍՄԱՆԷՄԻ ՍՐԲՈՅ ՅՈՎՈՒԵԱՆՑ  
ՏՊԱՐԱՆԻՆ ՎՐԱՅ

Հայկական Տպագրութեան  
400 ամեակին առթիւ



## Ա

Անցեալ 1912-13 տարին նշա-  
նակելի թուական մը եղաւ Հա-  
յութեան համար:

1512ին Վենետիկի մէջ կը տը-  
պուէր առաջին հայերէն գիրքը՝  
«Պարզատումարը» ձեռամբ ՅՈՎՈՒ  
անուէնով հայու մը, որուն ազ-  
գանունը, ծագումն ու հայրենիքը

անծանօթ կը մնան դեռ\* : Ուրեմն  
 1912ին հայ տպագրական գոր-  
 ծունէութիւնը կը բոլորէր չորս  
 հարիւր տարուան պատկառելի  
 շրջան մը, որ բնականաբար ան-  
 ուշադիր չպիտի անցնէր մտաւո-

\* Հիմա ընդհանրացած է Հայ անդրանիկ  
 սպագրիչին «Մեղաւոր» կամ «Մեղա-  
 պարս Յակոբ» անունը սալ, իբր թէ անի-  
 կա այդ անունով նանչցուած ըլլար ժամա-  
 նակակիցներէն: Հին գրիչներն ու հրատար-  
 կիչները գիրքերու յիշատակարաններուն մէջ  
 խոնարհամտութեամբ սովորաբար ինքզին-  
 ին կանուանէին «մեղաւոր», «մեղապարս»,  
 «նուաս», «տուպ», «մեղսակիր» եւն,  
 որոնք իրենց անուններէն անբաժան անա-  
 կաններ չէին բնաւ: Այս սովորութեան հե-  
 տեւած ըլլալուն համար մեր Յակոբն ալ  
 պէ՞տք էր «Մեղաւոր» կամ «Մեղապարս»  
 աննահ մակդիրը կցել անոր անունին ու  
 այդպէս ընդհանրացնել:

բականներու կողմէ : Արդէն ժա-  
 մանակ առաջ կովկասի ու թուր-  
 քիոյ մայրաքաղաքներու օրա-  
 թերթերն ու պարբերականները  
 մասնաւոր կոչերով ու հրատա-  
 րակութիւններով ընդհանուրի ու-  
 շադրութիւնը կը հրաւիրէին ու  
 կը թելադրէին յորելեանական  
 հանդէսներ կատարել Հայկական  
 Տպագրութեան 400րդ տարեդար-  
 ձին առթիւ ու յաւերժացնել ա-  
 նոր յիշատակը՝ Հայ դպրոցին ու  
 դպրութեան զարգացման ու յա-  
 ռաջդիմութեան օգտին առանձին  
 հանգանակութիւններ բանալով :

Այս կոչերն ու հրաւերները գը-  
 տան Հայութեան սրտին մէջ ա-  
 կնկալուած արձագանգը ու Ազգիս  
 Վեհ . Հայրապետը Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.  
 միացնելով հայ տպագրութեան

չորսդարեան Յոբելեանին հայկական նշանագրերու գլուխի 15րդ դարադարձը, 1912 հոկտ. 13էն մինչեւ 1913 հոկտ. 13 հռչակեց Յոբելեանական Տարի ու թարգմանչաց տօնին անձամբ կատարեց հանդէսներու բացումը Օշականի մէջ առընթեր Սուրբ Մեսրոպի շիրմին : Այս առթիւ Նորին Սրբութիւնը իր հոգեւոր հօտին ուղղած մասնաւոր կոնդակով կարգադրեց, որ համօրէն Հայութիւնը ամէն ուրեք անխտիր մասնակցի Համազգային Մեծ Տօնին ու անոր յիշատակը յաւերժացընելու համար չխնայէ իր բարոյական ու նիւթական օժանդակութիւնը :

Հակառակ որ Հայ ազգը յոյզերով և յոյսերով լեցուն քա-



Ղաքական դժնդակ տարի մը կը  
 բոլորէր և մութ ու սպառնալից  
 ամպեր կուտակուած էին հորի-  
 զոնին վրայ, մխիթարական էր  
 տեսնել՝ թէ կովկասի, Թուրքիոյ  
 և մօտաւոր ու հեռաւոր գա-  
 ղութներու մէջ բնակող մեր հա-  
 մազգի եղբայրները ինչպէս սըր-  
 տագին եռանդով ու համակրու-  
 թեամբ ընդ առաջ գացին եղած  
 հրաւէրներուն և ամբողջ աշխար-  
 հին ցոյց տուին՝ թէ Հայը, իբրեւ  
 քաղաքակիրթ ազգերու ընտա-  
 նիքին մէկ անդամը, գիտէ բարձր  
 գնահատել արժէքը գրական ու  
 կրթական կեանքին, որուն ա-  
 ռաջխաղացութիւնը չեն կրնար  
 կասեցնել ո՛չ քաղաքական ան-  
 նպաստ պայմաններն ու ո՛չ նոյն  
 իսկ իր գոյութեան սպառնացող

դառն ու դաժան իրականու-  
թիւնները :

Եւ ահա՛ շատ տեղեր, սկսեալ  
Մայր Աթոռէն ու կեդրոն քաղաք-  
ներէն, տեղի ունեցան յորելեանա-  
կան հանդէսներ աւելի կամ նուազ  
շուքով, ընտրուեցան յատուկ  
յանձնաժողովներ, հիմնուեցան գը-  
րական ու դպրոցական ֆոնտեր  
և Մեսրոպեան նշանագրերու գիւ-  
տին, հայկական տպարաններու  
կատարած դերին ու անոնց պատ-  
մութեան վերաբերեալ բազմա-  
թիւ հրատարակութիւններ եղան  
թէ՛ ազգային օրաթերթերու և  
պարբերականներու մէջ և թէ՛  
առանձին գիրքերով :

Նկատելով որ այդ հրատարա-  
կութիւններէն ոմանք վեր ի վե-  
րոյ քանի մը տողերով թերի ու

յաճախ սխալ տեղեկութիւններ  
տուած էին Երուսաղէմի Ս. Յա-  
կոբեանց Տպարանին վրայ, փա-  
փաքեցանք այդ թերին լեցնել՝  
տալով նոյն Տպարանին ութսու-  
նամեայ գործունէութեան համա-  
ռօտ նկարագրութիւնը, որքան  
կը ներեն փոքրիկ Յաւելուածիս  
ամփոփ էջերը:

## Բ

Երբ ընդհանուր ակնարկ մը  
ձգուի հայ տպագրութեան պատ-  
մութեան վրայ, կարելի չէ ա-  
նուշադիր թողուլ նաեւ Երուսա-  
ղէմի Տպարանը, որ իր գոյու-  
թեան ութսուն տարուան շրջա-  
նին ունեցած է գործունէութեան  
համեստ բաժին մը, տալով զանա-  
զան նիւթերու վերաբերեալ մեծ

ու փոքր ծաւալով հատորներ, որոնք աչքառու թիւ մը կը կազմեն, ինչպէս կը տեսնուի Յաւելուածիս վերջը մեր ներկայացուցած Յուցակէն :

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Տպարանը հիմնուած է 1833ին Գարրիէլ Նիկոմիդացւոյն պատրիարքութեան և Ծայրագոյն կառավարիչ Ադրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարքի վերատեսչութեան ժամանակ : Հիմնադիրը եղած է Զաքարիա Եպիսկոպոս . Տէր Պետրոսեան, որ Գարրիէլէն վերջնատաւ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռը :

Զաքարիա Պատրիարք կը ծնի Կորդուաց երկրի Կողբ գիւղը 1780ին և փոքր հասակէն մօրմէն որբանալով, նախնական ուսումը կառ-

նէ իր քահանայ հօրը քով Տա-  
 րօնի Ս. Առաքելոց վանքին մէջ :  
 Պատանեկութեան հասակին կեր-  
 թայ էջմիածին, ուր կաշակերտի  
 Աշտարակեցի Ներսէս Արեղային  
 (յետոյ կաթողիկոս) ու կը պա-  
 րապի Ս. Գրոց և քերականա-  
 կան ուսմանց : Այն ժամանակ-  
 ները Դաւիթ-Դանիէլեան վէճերը  
 կը յուզուէին Մայր Աթոռին մէջ :  
 Զաքարիա պատանին չկրնալով  
 այնտեղ գոհացում ստանալ իր  
 ուսումնատենչ իղձերուն, կը վե-  
 րադառնայ հօրը քով Ս. Առա-  
 քելոց վանքը : Հոն ալ երկար  
 չմնար, ուսման ծարաւը կը մղէ  
 Ղինքը դէպի Պոլիս, ուր կը յու-  
 սար յագուրդ գտնել հայ գրա-  
 դէտներու և ուսումնականներու  
 մօտ : Մինչդեռ նպատակին իրա-

կանացման հոգերով կը մտա-  
տանջուէր, Մայրաքաղաքին մէջ  
դիպուածով կը ծանօթանայ Մը-  
խիթարեան վարդապետներու, ո-  
րոնց կը յայտնէ իր խորհուրդն  
ու իղձերը և հաճեցնելով զա-  
նոնք, հետերնին կուղեւորի վե-  
նետիկ ու կաշակերտի Ս. Ղա-  
զարու վարժարանին :

Եռանդուն բնաւորութեամբ ու  
համեստ վարքովը Չաքարիա սի-  
րելի կը դառնայ այնտեղ Արքա-  
հօր ու Միաբանութեան և երբ  
կաւարտէ հայերէն գրականու-  
թեան ու այլ կարեւոր ուսմանց  
ընթացքը, Մխիթարեանց Ուխտի  
կրօնաւորներուն կարգը մտնելու  
առաջարկ կըլլայ իրեն, բայց ա-  
նիկա անբաւական ցուցնելով իր  
անձը, կը բաժնուի Ս. Ղազարէն

ու կը վերադառնայ Պոլիս, ուր  
 կը դիմէ Երուսաղէմի փոխանոր-  
 դին՝ Ս. Յակոբայ ծառայութեան  
 մտնելու խնդրանքով: Փոխա-  
 նորդը նոյն տարուան ուխտա-  
 ւորներուն հետ կը ղրկէ զինքը  
 Երուսաղէմ: Այն ժամանակ Ա-  
 թոռին Քահակալն էր Վանեցի  
 Թէոդորոս Պատրիարքը:

Որքան որ Զաքարիա Երուսա-  
 ղէմի մէջ խոնարհ երեւոյթով ծա-  
 ռայական պաշտօններ կը վարէ,  
 բայց շուտով կը յայտնուի իր  
 հանճարամտութիւնն և ուսում-  
 նական պատրաստութիւնը ու  
 Պատրիարքը քովը առնելով կը  
 յանձնէ զայն իր քարտուղարին՝  
 Երուսաղէմացի կիրակոս Վարդա-  
 պետին խնամոց: Շատ չանցնիր՝  
 ուխտաւորութեամբ Երուսաղէմ

գտնուող Արփիարեան Փիլիպպոս  
 Ամիրայի Տիկնոջ միջնորդելովը  
 Պատրիարքը վարդապետութեան  
 աստիճանին կը բարձրացնէ Չա-  
 քարիան, որուն առջեւ կը բա-  
 ցուի այլ եւս գործունէութեան  
 ասպարէզը: Նուիրակութեան կը  
 ղրկուի Տիգրանակերտի ու Սա-  
 սունի կողմերը 1820-22ին և Իզ-  
 միր՝ 1825ին, ու անկէ Պոլիս  
 հրաւիրուելով Երուսաղէմի փո-  
 խանորդ կը կարգուի (1826-29)\*:

Չը հեռանալու համար մեր նիւ-  
 թէն, զանց կընենք յիշել Չա-  
 քարիայի կեանքին մանրամասն  
 պարագաները և Պոլսոյ փոխա-  
 նորդութեան ժամանակ յիշատա-

---

\*Այս տեղեկութիւնները կը բաղենք Տիգ-  
 րան Սաւալանեանցի անսիպ «Պատմութիւն  
 Երուսաղէմի»էն:



կի ու երախտեաց արժանի ան-  
 դուլ ջանքերն ու գործունէու-  
 թիւնը, որով կը յաջողի վերա-  
 հաստատել Փրկչի Ս. Գերեզմա-  
 նին վրայ Հայոց պատարագելու  
 իրաւունքը և փառաւորել ու պան-  
 ծացնել Հայ անունը Ս. Երկրին  
 մէջ, միայն կուզենք ներկայա-  
 ցընել Երուսաղէմի մէջ տպարան  
 ու վարժարան հիմնելու համար  
 անոր աշխատութիւնները:

Իբրեւ աշակերտ Ս. Ղազարու՝  
 անիկա մօտէն տեսած ըլլալով  
 Մխիթարեաններու դրական ու  
 կրթական գործունէութիւնը, ըմ-  
 բռնած էր տպարանի ու դպրոցի  
 կարեւորութիւնը և միտքը դրած՝  
 օժտել Ս. Աթոռը այդ երկու հաս-  
 տատութիւններով: Ուստի Պոլ-  
 սոյ մէջ կակսի կամաց կամաց

պատրաստել տպարանի հարկա-  
 ւոր նիւթերը և ծախու կառնէ  
 քանի մը տեսակ տառերու մայ-  
 րեր: Սակայն դեռ գործը գլուխ  
 չբերած, 1830 մարտին արքու-  
 նական հրամանով կաքսորուի  
 կիպրոս: Այնտեղէն կը գրէ Թրիէս  
 Զմիւռնացի վաճառական Պետ-  
 րոս աղա Եուսուֆեանին և կը  
 խնդրէ, որ տպագրական մամուլ  
 մը նուիրէ Երուսաղէմի Աթոռին:  
 Եուսուֆեան սիրայօժար կը գնէ  
 փայտէ մամուլ մը և կապարեալ  
 տառեր, որոնք նախապէս հայ-  
 թայթուած մայրերուն և ուրիշ  
 նիւթերու հետ կը դրկուին Երու-  
 սաղէմ: Սակայն կարելի չըլլար տա-  
 կաւին տպագրութեան ձեռնար-  
 կել կարեւորագոյն գործիքներու  
 պակասութեան պատճառաւ:

Յաջորդ տարին Ադրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարքի միջնորդութեամբ ու ամիրաներու ջանքով Զաքարիա կաղատի աքսորէն և Երուսաղէմ դառնալէն անմիջապէս յետոյ կուղեւորի Էջմիածին և պիտկոպոսանալու (1831), ու վերադարձին Պատրիարքական փոխանորդ կը կարգուի: 1833ին սկիզբները կերթայ Եգիպտոս ու շինութեանց արտօնութիւն ըստանալու և քանի մը խնդիրներու համար կը ներկայանայ Մեհմէտ Ալի Փաշային, որուն իշխանութեան ներքեւ կը գտնուէր այն ատեն Պաղեստինը: Հոն իր բարեկամին՝ Ակնցի Մահտեսի Ալիքսան Եղիազարեանի ծախքով կը գնէ վիմագրական մամուլ մը, որով առաջին անգամ Եգիպտոսի

մէջ կը հրատարակէ վիմատիպ յայտարարութիւն մը, ուր կը պանծացնէ երկու հարազատներուն՝ Պետրոսի և Ալիքսանի երախտիքը:

Երուսաղէմ դարձին Չաքարիա Պօղոս Պատրիարքի նախագահութեամբ գումարել կուտայ ժողով մը և հոն բացատրելով վարժարան ու տպարան մը ունենալու կարեւորութիւնը, ամէնուն հաւանութեան կենթարկէ այդ երկուքին հաստատութիւնը: Որպէս զի գործը ամուր հիմերու վրայ դրուի, նոյն ժողովին մէջ կորոշեն առանձին դրամագլուխ մը յանձնել Չաքարիային՝ հոգալու համար կարեւոր պէտքերը: Պօղոս Պատրիարք և Աւագ-Լուսարար Մկրտիչ Եպիսկ, պարտամուրհակով Աթոռին վրայ ունեցած ի-

բենց պահանջը կը նուիրեն դրպ-  
 րոցին, որուն վերատեսուչ կը  
 կարգեն նոյն ինքն Զաքարիա  
 Եպիս . ը և Հնդկաստանի մէջ նոյն  
 տարին վախճանած նուիրակ Սա-  
 մուէլ Վարդապետի կտակով թո-  
 դած գումարն ալ՝ 150,000 դա-  
 հեկան կը յատկացնեն տպարանի  
 ծախքերուն ու գործադրութիւնը  
 կը յանձնեն Երուսաղէմացի կի-  
 րակոս Եպս . ին : Վարժարանի հիմ-  
 նարկութիւնը դեռ ժամանակ մը  
 կը յետաձգուի յարմար ուսուցիչ-  
 ներու չգոյութեան պատճառաւ,  
 իսկ անմիջապէս կը բացուի տը-  
 պարանը, ուր կսկսին աշխատիլ  
 Պոլսէն բերուած տպագրիչ ու  
 ձուլիչ արհեստաւորներ :

Տպարանի հիմնարկութենէն մին-  
 չեւ Զաքարիայի պատրիարքանալը

1833-1841 ութը տարուան միջոցին հետեւեալ գիրքերը միայն գտանք հրատարակուած . ա) Տեսրակ Աղօթամասոյց, 1833. բ) Տեսուքիւն Անթառամ ծաղիկ Մեծացուցեից, 1834. գ) Մեկնութիւն Տերունական Հայր մեր աղօթից, 1836. զ) Յուցակ Սրբոյ Յարութեան Աւիարհամասրան Տանարի յակացեալ սարեկան հանդիսաւոր արարողութեանց, 1839. ե) Տեսրակ գովեստի նորոգ և սրբագրութեամբ, 1839. զ) Զանազանութիւն հինգ դարուց, հայատառ թուրքերէն Աղբիանուպոլսեցի Պօղոս Պատրիարքի, երեք հատոր, 1839. է) Արարողութիւն Սրբոյ Աթոռոյս Երուսաղեմի ըստ նախնական սովորութեան, 1841. ը) Կանոն Տրդայանուէրի, 1841:





† Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐԿ  
Ս. ԵՐՈՍՏՆԱՆԻ



Եթէ կան ասոնցմէ դուրս ուրիշ հրատարակութիւններ, անձանօթ կը մնան դեռ մեզի, ինչու որ այստեղ խնամք չէ տարուած տպագրուած գիրքերու ամբողջական հաւաքածոն կազմելու\* :

## Գ

Գարրիէլի վախճանէն յետոյ թէպէտ ըստ կարգի և աւագութեան Երուսաղէմացի կիրակոս Եպս. ին կիյնար պատրիարքական գահը, բայց իբր տեղացի՝ Երուսաղէմի հայ ժողովուրդին հետ

---

\*Այս առթիւ կը խնդրենք գրադարաններու տեսուչներէ ու մասնաւոր անհատներէ, որ եթէ ունին Յաւելուածիս կից մեր հրատարակած Յուցակէն դուրս Երուսաղէմի գիրքեր, հանին ղրկել անոնց նկարագրութիւնը, որպէս զի կարենանք ամբողջացնել մեր ցանկը: Ի հարկին պատաս եմ նաեւ դրամով գնել:

ազգակցական կապեր ունենալու հանդամանքը արգելք կըլլայ իրեն ընտրութեան և պատրիարքական աթոռը կը վիճակի Չաքարիա Եպս.ին\* :

\* Հին աւանդական օրէնքի մը համեմատ, որ մինչեւ այսօր զգուշութեամբ կը պահուի, Երուսաղէմացի ազգայիններէն ոչ ոք կրնայ անդամակցիլ Միաբանութեան: Կիրակոս Պատրիարքը վարդապետ ձեռնադրուած է Ադրիանուպոլսոյ մէջ 1807ին սեղույն առաջնորդ Միքայէլ Եպս.էն: Չորս տարի վերջ՝ 1811ին երբ այցելութեան կելլէ իր հայրենիք, Թէոդորոս Պատրիարք զնահատելով անոր ձիրքերն ու արժանիքը՝ քովը կը պահէ իբրեւ փարսուղար պատրիարքարանի եւ 1813ին կը ղրկէ Էջմիածին Եպիսկոպոսական ասիեան ընդունելու:

Կիրակոսի նման բացառաբար Միաբանութեան մէջ ընդունուած է Երուսաղէմացի Հաննէ վարդապետը կամ Յովհաննէս Եպիսկոպոսը՝ մեծ երախտաւորը Երուսաղէմի Աթոռին եւ հեղինակ Պատմութեան:

Տեսանք արդէն՝ թէ տարիներ  
առաջ Չաքարիայի փայփայած  
նպատակը եղած էր Ս. Յակոբեանց  
Ա. թոռին մէջ վարժարանի ու տը-  
պարանի մը հաստատութիւնը: Երբ  
պատրիարքական գահը կը բարձ-  
րանայ (1841 հոկտ. 24), եռան-  
դով կը փարի այդ նպատակին ու  
կսկսի մղում տալ տպարանին\* :

\*Կը բանայ նաեւ առաջին յառանգաւորաց վարժարանը Ռէմլէի վանքին մէջ ու անոր բարեկարգութեան համար ուսմանց կարգը, ուսուցիչներու եւ ուսանողներու պարսկանութիւնը սահմանող կանոնի մը պատրաստութիւնը կը յանձնէ իր փոխանորդին՝ Կիրակոս Եպս.ի եւ մի քանի գրիխաւոր վարդապետներու (1843 յուլիս 25): Մէկ ու կէս տարի վերջ վարժարանը կը փոխադրէ Երուսաղէմ առանձին սան մը մէջ եւ ուսուցիչ կը կարգէ ժամանակին «բարեջան եւ բազմահմուտ» դասփարակը՝ Արմաշի վանքին Մուրաս վարժապետը:

Իբրեւ աշակերտ Ս. Ղազարու և նախանձաւոր Մխիթարեան հայրերու գովելի վաստակներուն՝ կը խորհի հրատարակել նախնի մատենագիրներու գործերը, առանց ուշադրութեան առնելու տպարանին բազմապատիկ թերութիւնները: Իր պատրիարքութեան շորսու կէս տարուան շրջանին (1841 հոկտ. 24—1846 մայիս 7) հրատարակուած կը գտնենք տասն և մէկ գիրքեր, որոնց մէջ են՝ Մառտոս Կանոնեալ Մկրտուքեան, Պատմութիւն Յովհաննու Կարուղիկոսի և Լամբրոնացւոյն Խորհրդածութիւն Ս. Պատարագի: Այս երեք գիրքերը երբ Պոլիս կը հասնին, Աստուածատուր Պատրիարքը սաստիկ կը զայրանայ և ազդու միջոցներ ձեռք կառնէ

փակել տալու Երուսաղէմի տը-  
 պարանը ու արգիլելու այդ գիր-  
 քերուն վաճառումը: Մառնոցը  
 թէպէտ հին ձեռագիրներու վրայ  
 տպուած՝ տեղ մը միայն կը տար-  
 բերէր միւս տպագրուածներէն .  
 իսկ Խորհրդածուքիւն Ս. Պատարա-  
 գին հեղինակութիւնը բլլալուն  
 համար Լամբրոնացւոյն, որ իր  
 գրութեանց մէջ տեղ տեղ ջատա-  
 գով կը համարուի Հռովմէական  
 Եկեղեցւոյ արտաքին ծիսական  
 բարեկարգութեանց, Աստուածա-  
 տուր կը կասկածէր՝ թէ Զաքարիա  
 Պատրիարք իբրեւ նախկին աշա-  
 կերտ Մխիթարեաններու՝ կը ծա-  
 ռայէր անոնց սկզբունքներուն և  
 արդէն այս պատճառաւ հաշտ աչ-  
 քով չէր նայէր անոր: Տեղի չը  
 տալու համար գայթակղութեան

կարգիլուի Մաեսոցի տարածումը  
 իսկ Լամբրոնացւոյն գործը ի վա-  
 ճառ կը հանուի: Յովհաննէս Կա-  
 թուղիկոսի Պատմութիւնը վերջէն  
 կրկին հրատարակուեցաւ (1867)՝  
 յապաւելով միայն թերթ մը, ուր  
 ազատօրէն խօսուած է Իսլամներ-  
 րու Մարգարէին վրայ:

Այս ընդդիմութիւնը չկրնալ  
 խոչնդոտ ըլլալ Զաքարիա Պատ-  
 րիարքի գրասէր Չանքերուն և  
 հետզհետէ ձեռք կը զարնէ ուրիշ  
 հրատարակութեանց, որոնցմէ՝ ինչ-  
 պէս ըսինք՝ տասն և մէկը միայն  
 ծանօթ են մեզի:



Զաքարիայի յաջորդին ընտրու-  
 թեան ժամանակ Միարանու թեան  
 ուշադրութիւնը կեդրոնացած էր  
 Կիրակոս Եպս.ին վրայ իբրեւ միակ  
 արժանաւորագոյնին թէ՛ իր ընտիր  
 ձիրքերով և թէ՛ բազմամեայ ար-  
 դիւն քննրովը: Կիրակոս Եպս.  
 ընտրութենէն առաջ համակերպե-  
 լով Միարանու թեան խնդրանքին՝  
 կատորագրէ յանձնառութեան գիր  
 մը, որուն համեմատ կը խոստանայ  
 ուրանալ Երուսաղէմաքնակ իր  
 բոլոր ազգականները, չճանչնալ  
 զանոնք ժառանգ իրեն սեփակա-  
 նութեանց, անոնցմէ ոչ մէկը ըն-  
 դունիլ վանքին մէջ, ոչ ալ յանձնել  
 Միարանու թեան վերաբերեալ որ  
 և է պաշտօն կամ ծառայութիւն:

Կ. Պոլսոյ ժողովն իր կարգին  
մը հաստատէ այս խոստմնագիրը  
ու բացառաբար կը վաւերացնէ  
Միաբանութեան ընտրութիւնը\* :

Կիրակոս Պատրիարք իբր գործակից ու գաղափարակից Ջաքարիայի, բնական է որ պիտի ցանկար առաջ տանիլ ու զարգացնել իր Նախորդին սկսած տպարանական գործը : Այդ նպատակաւ Չմիւռնիայէն կը հրաւիրէ իր վաղեմի բարեկամին Գրիգոր Սաւալանեանցի հմուտ ու լեզուազէտ որդին՝ Տիգրան Սաւալանեանցը իբրեւ ուսուցիչ հայկաբանութեան

---

\* Շղթայակրէն վերջ, մինչեւ Ազգ. Սահմանադրութեան հաստատութիւնը, Երուսաղէմի պատրիարքները կրնտուէին Միաբանութենէն ու կը վաւերացուէին Կեդրոնէն :





† Տ. ԵՍԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԿ  
Ս. ԵՐՈՒՍՏԱՆԻ



և մի քանի ուրիշ առարկաներու ,  
 և անոր կը յանձնէ տպագրելի  
 գիրքերու սրբագրութիւնը (1848  
 օգոստոս) : Սաւալանեանց նախ  
 կը հրատարակէ Գաղատացի Իսա-  
 հակ Ծ . վարդապետի յօրինած  
 Յովսէփ Գեղեցիկը՝ յարդարելով  
 ու սրբագրելով լեզուն ու ոճը :

Կիրակոս Պատրիարք տպարանի  
 տնօրէն ու մաշած կապարեայ տա-  
 ունքուն տեղ նորաձոյլ ու վայել-  
 չափազ տառեր բերել կուտայ  
 Միւհէնտիւեանէն ու անոնցմով  
 կը հրատարակէ Պետրոս Արքեպ .  
 Բերդումեանցի Եփեսացւոց մեկ-  
 նուրիւնը : Վիէննայէն ալ բերել  
 կուտայ գեղեցիկ տպագրական  
 ձեռքի մամուլ մը , որուն վրայ  
 կայ հետեւեալ արձանագրու-  
 թիւնը . « Ի յառաջադիմութիւն

հայերէն մատենագրութեան յՆ-  
րուսադէմ քաղաքի . յօրինեալ ի  
Վիէննա . 1849» :

Պատրիարքի փափաքն էր ըն-  
դարձակել Վանքին մէջ ուսմանց  
ու գիտութեանց ասպարէզը , ու  
տեսնելով որ դպրոցի ու տպա-  
րանի շէնքերը զուրկ են յարմար  
ութիւններէ , միտքը կը դնէ  
ատոնց համար առանձին շէնքեր  
կառուցանել ու կը գրէ Պոլիս  
իրեն փոխանորդին՝ Զմիւռնացի  
Յովհաննէս Եպս.ին՝ վարժարանի ,  
տպարանի , ինչպէս նաեւ հիւան-  
դանոցի շինութեան արքունա-  
կան հրամանագիր հանել ու հա-  
յազգի ճարտարապետի մը հետ  
փութով ուղարկել Երուսաղէմ :

Ա. փաճ՝ ու որ բարեջան ու կրթա-  
սէր Պատրիարքին պաշտօնավա-

բու թիւնը կարճատեւ կըլլայ, այն է՝ երեք տարի ու երեք ամիս (1847 փետր. 13—1850 մայիս 25), և անակնկալ մահը թոյլ չի տար տեսնել իրականացումը իր գեղեցիկ ու ազգօգուտ ծրագիրներուն :

## Ե

Յաջորդը՝ Զմիւռնացի Յովհաննէս Պատրիարք իր գահակալութեան առաջին տարիէն հոգ կը տանի բարւոքել Վանքի տընտեսական վիճակը և ստեղծել հասոյթի նորանոր աղբիւրներ : Այդ նպատակով ծախու կառնէ կարգ մը կալուածներ ու գետիններ իբրեւ մշտնջենական սեփականութիւն Աթոռին : Իր շինարար գործունէութեան արդիւնք-

ներքը կը մնան, ի միջի այլոց, Երուսաղէմի այժմեան Պատրիարքարանի ու Ճեմարանի վայելուչ ու հոյակապ շէնքերը, որքան պատուարեր Սղգին՝ նոյնքան յիշատակելի կոթողներ զանոնք կառուցանել տուողին անուան:

Յովհաննէս Պատրիարք նկատուած է անտեսագէտ ու գործնական միտքի տէր մարդ, բայց զուրկ գիրքի ու գրականութեան ճաշակէ: Ըլլալով չափազանց խնայասէր, ժառանգաւորներու միակ ուսուցչին՝ Տիգրան Սաւալանեանցի ռոճիկը կրճատելով անուղղակի կստիպէ զայն հեռանալ Երուսաղէմէն և իր պատրիարքութեան վերջին քանի մը տարիներուն պատճառ կըլլայ վարժարանի փակուելուն: Այս

պարագան առիթ կուտայ ժա-  
 մանակին նորահաս արեղաներու  
 և սարկաւազներու գանգատնե-  
 րուն ու բողոքներուն, որոնց  
 արձագանգը երբեմն կը հասնէր  
 մինչեւ Պոլիս: Սակայն և այնպէս  
 վանքին Տպարանը, չդադրիւր  
 գործելէ, ու Յովհաննէսի պատ-  
 րիարքութեան տասնամեայ շրջա-  
 նին (1850-1860) հրատարակուած  
 կը գտնենք հետեւեալ 13 գիրքերը .  
 ա) Երեւոյթ կրից, 1851 . բ) Տա-  
 բերք իմաստասիրութեան, 1852 .  
 գ) Հայելի վիրաց, 1852 . դ) Մեկ-  
 նութիւն Յայտնութեան, [Ժարգ. Ն .  
 Համբրոնացւոյ, 1853 . ե) Կսա-  
 կագիր հոգեւան բանից, 1853 .  
 զ) Տրամաբանութիւն, Գր. Փէշտի-  
 մալճեան, 1854 . է) Բացատրու-  
 թիւն հրաժարման եւ զղջման,

1854. ը) Տեղագրութիւն Երուսա-  
ղեմի, Տանվիյլ, 1855. թ) Ճառ. ք  
եւ խոսովանութիւնք հաւատոյ  
Գրիգորի Նարեկացւոյ եւ Վահ-  
րամայ Վարդապետի, 1856. ժ)  
Հրահանգ կամ Ուսումն քարուց,  
1857. ժա) Ստորագրութիւն Երու-  
սաղեմի, 1859. ժբ) Ճառ. Հաղոր-  
թութեան, 1860, ժգ) Պատասխա-  
նիք Մխիթարայ Բահանայի Սկեւ-  
ռացւոյ, 1860 :

## Զ

Յովհաննէս Պատրիարքի մա-  
հուամբ (1860 դեկտ. 23) Աթոռը  
թափուր կը մնայ չորս տարի և  
քանի մը ամիս :

Պոլսոյ կեդրոնական վարչու-  
թիւնը Ա.դ.Վ. Սահմանադրութեան  
հաստատութեամբ նոր կազմա-




կերպու թիւն ստացած՝ Պատրիարքի մահէն անմիջապէս յետոյ կը ձեռնարկէ սահմանադրական ըսկզբունքներու համաձայն ձեւակերպել Երուսաղէմի Միաբանական Կանոնագիրը և կը մտադրէ տեղապահն ու պատրիարքը այս անգամուան համար ընտրել Միաբանութենէն դուրս եպիսկոպոսներէն, պատճառաբանելով թէ Վանքին մէջ կը պակսին այդ պաշտօններուն համապատասխան պատրաստութեան տէր թեկնածուներ :

Միաբանութիւնը զօրաւոր ընդդիմութիւն ցոյց կուտայ այդ կարգադրութեանց, իր ներքին օրէնքներուն ու աւանդութիւններուն հակառակ նկատելով դանոնք : կը մերժէ նոր ծրագրուած

Կանոնի ինչ ինչ յօդուածները ,  
որոնք չէին պատշաճեր Երուսա-  
ղէմի պայմաններուն ու որոշ չա-  
փով կը սահմանափակէին Միա-  
բանութեան իրաւասութիւնները  
և տեղապահն ու պատրիարքը իր  
անդամներէն ընտրուելու իրա-  
ւունքին վրայ կը պնդէ , յենլով  
Շղթայակրի ու Կոլոտի ժամա-  
նակէն նդովքով հաստատուած  
Կանոնին :

Այս անհամաձայնութիւնը հետ-  
ըզհետէ կառնէ մեծ համեմատու-  
թիւններ , որոնցմէ կը ծագին  
Աերսեհ-դուրսեհի ցաւալի վէճերն  
ու պայքարները և Վարչութեան  
անդամները , երեսփոխանութիւնը ,  
ժողովուրդն ու ազգային թեր-  
թերը կը բաժնուին երկու ընդ-  
դիմադիր կուսակցութիւններու՝





† Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԻ  
Ս. ԵՐՈՒՍԱԿԷՄԻ

ծանօթ Լուսաւորեալ ու Խաւա-  
րեալ, կամ Սահմանադրական ու  
Պահպանողական անուաներով :

Անցեալի այդ դէպքերը իրենց  
խոշոր գիծերուն մէջ բաւական  
նմանութիւն ունին ներկայի սա-  
ղիմական իրադարձութեանց հետ :  
Չչեղելու համար մեր նիւթէն  
աւելորդ կը համարինք այդ վէ-  
ճերու մասին գրել ու խորհրդա-  
ծել, զգուշանալով մանաւանդ՝  
որ ընթերցողները նկատի առնե-  
լով մեր միաբանի հանգամանքը,  
մի՛ գուցէ յետին միտքերու և  
դիտաւորութեանց վերագրեն մեր  
գրածները : Այդ պատճառաւ եր-  
կու խօսքով սոսկ եղելութիւնը  
կարձանագրենք ու կանցնինք :

Սահմանադրականներու պաշտ-  
պան թերթերը՝ Միւնասի, Մեղու

և Մասիս կսկսին բուռն պայ-  
 քար մղել պահպանողականներու  
 դէմ և ընդդիմախօսութիւնները  
 այն աստիճան առաջ կը տանին,  
 որ Ս. Յակոբեանց Ուխտը վար-  
 կարեկելու համար ծայրայեղ ար-  
 տայայտութիւններ կուտան իրենց  
 գրչին՝ անգոյ ու չափազանցեալ  
 մեղադրանքներ բարդելով Միա-  
 բանութեան վրայ: Վերջինս իր ըզ-  
 զացումներուն մէջ վիրաւորուած՝  
 կը վրդովի հրապարակային այդ  
 նախատինքներէն ու կը հերքէ  
 յիշեալ թերթերու ամբաստանու-  
 թիւնները հրատարակելով Երես-  
 փոխանական ժողովին ուղղուած  
 հետեւեալ երկու տետրակները.

ա) Հերժումն անիրաւ զրպարսու-  
 քեանց եւ աղերս առ Ընդհանուր  
 բարեխորհուրդ Ազգային ժողովն,

1861 : p) Բողոք երկրորդ առ Ազգային Ընդհանուր Ժողովն, զոր խոնարհաբար մատուցանե ամբողջ Միաբանութիւնն Ս. Երուսաղէմի, 1861 :

Յիշեալ տետրակներէն զատ նոյն 1861 տարին Տպարանը լոյս կընծայէ տետրակ մ'ալ՝ Յաւայի դեպք մը որ պատահեցաւ Բեթղեհեմ Ս. Ծննդեան մեր եկեղեցւոյն մէջ խորագրով : Այդ տետրակին մէջ նըկարագրուած է Հայ և Լատին Միաբանութեանց միջեւ տեղի ունեցած մեծ կռիւը Ս. Ծննդեան եկեղեցւոյն մէջ, ուր Լատինները մեր իրաւանց ոտնձգութիւնները բաժ էին :

Յաջորդ 1862-64 տարիներուն երկրորդ տպագրութեամբ լոյս կը տեսնեն Աղբիանապոլսեցի Պօ-

դոս Պատրիարքի Զանազանու-  
թեան երեք հատորները և 1863ին՝  
Սարգիս Միրզա վանանդեցւոյն  
Մեծն Ներսէս ողբերգութիւնը  
չորս վիճատիպ պատկերներով :

Այնուհետեւ, մինչեւ Եսայի Պատ-  
րիարքի գահակալութիւնը, նոր  
հրատարակութեան մը չենք հան-  
դիւպիր : Տպարանի այս գանդա-  
ղութեան պատճառ նկատուին թե-  
րեւս վերոյիշեալ խնդիրներու ե-  
րեսէն Միաբանութեան կրած ներ-  
քին յուղմունքները, որոնք չէին  
թոյլատրեր իրեն նուիրուելու տը-  
պարանական աշխատութեանց :





Սահմանադրականները համոզուելով, որ արտաքիններէն մէկը պատրիարք ընտրելու իրենց նըպատակը չպիտի կրնան առաջ տանիլ, տեղի կուտան վերջապէս և Երեսփ. Ժողովը 1864 օգոստ. 14ին Միաբանութեան ներկայացուցած եռանուն ցանկէն պատրիարք կընտրէ Կեսարիոյ Թալաս գիւղացի Եսայի վարդապետը և ասով վերջ կը դնեն վերել յիշուած վէճերն ու ազմուկները: Եսայի վարդ. իր ընտրութենէն քանի՞մը ամիս առաջ նոր դարձած էր Եւրոպայէն, ուր կը հետեւէր լուսանկարչութեան և կալուանաձուլման արհեստներուն: Այս պարագան լուսամիտ ու

դեղարուեստասէր հողեւորականի մը համբաւը վաստկցուցած էր իրեն Պոլսոյ մէջ և իբր այն կը կարծուէր՝ թէ անիկա միայն պիտի կրնար Միտրանու թիւնը դնել յառաջդիմութեան ճամբուն մէջ և ընտելացնել սահմանադրական սկզբունքներու :


Նոյն տարւոյն վերջերը նորընտիր Պատրիարքը եպիսկոպոսանայով կը դառնայ էջմիածնէն Պոլիս : Ազգ. վարչութիւնը կառաջարկէ իրեն փոյթ ու խնամք ունենալ վանքին մէջ դպրանոցի, տպարանի ու թանգարանի զարգացման : Պատրիարքը Ազգին փափաքը անթերի կատարելու պատրաստակամութիւն ցոյց կուտայ, խոստանալով հիմնել ժառանգաւորաց դպրանոց մը կա-

րեւոր ուսմանց ծրագրով և պահանջուածէն աւելի պայծառացնել Տպարանը, Մատենադարանն ու Թանգարանը: Ու արդարեւ Ա. Թորոք դառնալուն պէս (1865 ապրիլ 5) լրջօրէն դործի կսկսի ձեռնարկել:


Պոլսէն հետը բերած առաջին աշակերտներով անմիջապէս կը բանայ Ժառ. Վարժ.ը իր նախորդին կառուցած ճեմարանի հոյակապ շէնքին մէջ, որու ընդարձակ սրահին 12 դարանները կը յատկացնէ Թանգարանի, ուր հետզհետէ կը հաւաքուին հնութեանց վերաբերեալ զանազան ուսարկաներ: Կը բանայ լուսանկարչանոց մը ու պատրիարքարանի անձնական սենեակներէն մէկը կը վերածէ կալուանաձուլման աշխատանոցի՝ դործէ ազատ

Ժամերուն իրեն զբաղման համար :  
 Կը կարգաւորէ նաեւ Չեռագիր-  
 ներու Մատենադարանը ու կա-  
 նոնաւոր ցուցակ մը կազմելու  
 աշխատութիւնը կը յանձնէ Տիգ-  
 րան Սաւայանեանցին , որ 1863ին  
 կրկին հրաւիրուած էր Երուսա-  
 ղէմ քարտուղարութեան և ու-  
 սուցչութեան պաշտօններով :

Մինչեւ այն ատեն Տպարանը կը  
 գտնուէր Վանքին հիւսիս-արեւե-  
 լեան կողմը քանի մը սենեակ-  
 ներ պարունակող թաղի մը մէջ ,  
 որ զուրկ էր կարեւոր յարմա-  
 րութիւններէ : Կիրակոս Պատ-  
 րիարքը , ինչպէս տեսանք , մը-  
 տադրած էր նոր շէնք մը կա-  
 ուցանել , սակայն մահը վրայ կը  
 հասնի և 15 տարի տակաւին տը-  
 պարանը կը մնայ նոյն թաղին մէջ :



† ՏԻԳՐԱՆ ՍԱԻԱԼԱՆԵԱՆՑ  
Խմբագիր «Միօն»ի



Նիւթական միջոցները չէին թոյ-  
 լատրեր Եսայի Պատրիարքի նոր  
 չէնք կառուցանել, ուստի կորոչէ  
 վանքին պատրաստ շինութիւն-  
 ներէն մէկը յարմարցնելով վե-  
 րածել տպարանի: Սուրբ Յակո-  
 բեանց տաճարի հարաւային կողմը  
 կը գտնուէր կամարածածկ ըն-  
 դարձակ գետնայարկ մը մօտ 1000  
 քառ. մէթր տարածութեամբ, զոր  
 Եղիազար Կաթողիկոս շինել տուած  
 էր (1675) ցամաքէն եկող ուխ-  
 տաւորաց կենդանիներուն իբր  
 պատսպարան՝ վերնայարկի երկու  
 թաղերով միասին: Ս,յդ գետնա-  
 յարկի երկու երրորդ մասին վրայ  
 տպարանական յարմարութեանց  
 համեմատ փոփոխութիւններ կը  
 կատարուին՝ ձուլարանի, գրա-  
 շարանոցի, տպագրատան, կազ-

մատան և գրավաճառանոցի բա-  
 ժանու մեքով ու հոն կը տեղա-  
 փոխուին գործիքներն ու տառերն,  
 որոնց վրայ կաւելնան Պատրիար-  
 քին Պոլսոյ մեջ Յ. Միւհէնտիսեա-  
 նէն գնած նորաձոյլ տառերն ու  
 անոնց մայրերը: Յաջորդ տարին  
 Եսայի Պատրիարքի մտերիմ բարե-  
 կամն ու հայրենակիցը՝ Յակոբ էֆ.  
 Աշրգեան կը նուիրէ մեծ տպագ-  
 րական ձեռքի մամուլ մը, որուն  
 վրայ կայ հետեւեալ արձանագ-  
 րութիւնը. «Ն Սք. Երուսաղէմ  
 1866 օգոստ. 14: Տպագրութեան  
 մամուլս յիշատակ է Թալասցի Ա-  
 շրգեան մեծ. Յակոբ աղայի, որ  
 բնակի յԱղէքսանդրիա»: Ասոնց  
 վրայ կաւելնան կազմատան հա-  
 մար ջրարաշխական մամուլ մը,  
 կտրող մեքենաներ, կաղապար-



ներ և ուրիշ երկրորդական գործիքներ, ինչպէս նաեւ վիմագրական նոր մամուլ մը:

Քանի մը տարի վերջ երբ գործերը հետզհետէ կընդարձակուին, առանձին ձուլարանի և գիրքերու մթերանոցի պէտքը զգացուելով, տպարանին կը կցուի գետնայարկի մնացեալ երրորդ մասը, որուն երկու բաժանումներէն մէկը կը յատկացուի ձուլարանի և միւսին մէջ կամբարուին կազմուած ու անկազմ գիրքերը: Տպարանին վրայ յաւելեալ այս մասին նորոգութեանց ու փոփոխութեանց ծախքը՝ 274 ոսկի կը նուիրէ Յակոբ էֆ. Աշրգեան որուն ի յիշատակ հիւսիսային արտաքին պատին վրայ զետեղուած է հետեւեալ արձանագրութիւնը.

«Երկրորդ մասն տպարանիս յա-  
 ւելեալ իբր գրանոց և ձուլարան  
 նորոգեցաւ ի պատրիարգութեան  
 Տ. Եսայեայ Ս. Արքեպիսկոպոսի  
 ի յիշատակ մեծահամբաւ Աշըգ-  
 եան մհի. Յակոբ Էֆէնտիի ի կե-  
 սարիոյ Թալաս գեղջէն. 1871» :

Գործին ընդարձակութեան հա-  
 մեմատ կը կրկնապատկուի ու կե-  
 ուապատկուի նաեւ գործաւոր-  
 ներու թիւը և ականատեսները  
 կըսեն՝ թէ եղած է ժամանակ, որ  
 մինչեւ 15-20 հոգի աշխատած են  
 տպարանին մէջ: Բնականաբար  
 նոյն համեմատութեամբ ալ կա-  
 լելնան ծախքերը: Միաբաններէն  
 ոմանք, որ Յովհաննէս Պատ-  
 րիարքի խնայասիրութեան շնոր-  
 հիւ տնտեսապէս ծաղկեալ վիճա-  
 կի մէջ տեսած էին վանքը, այժմ

Վարժարանի, Տպարանի, Լուսա-  
նըկարչութեան գործարանի վրայ  
և ուրիշ առիթներով եղած չա-  
փազանց ծախքերուն երեսէն տո-  
կոսաւոր յարաճուն պարտքի մը  
գոյանալը տեսնելով, ամէն ան-  
գամ երբ չափաւորութեան խոր-  
հուրդներ կուտան Պատրիարքին,  
վերջինս կը պատասխանէ. «Այս  
կը պահանջեն մեզմէ Ազգն ու  
ժամանակը» :

## Ը

Երկար պիտի ըլլար մէկիկ մէ-  
կիկ թուել Եսայի Պատրիարքի  
քսան տարուան պաշտօնավարու-  
թեան միջոցին (1865-1885) հրա-  
տարակուած գիրքերը, որոնց հա-  
մագումարը կը հասնի՝ մեծ պզտիկ՝

169 *Կտորի\** : Կը բաւականանանք  
 միայն նշանակելով հետեւեալները.  
 Եղիեէ, Զանազանութիւն Գ. տպ.  
 Պատմ. Յովն. Կարուղիկոսի, Ա. Եսա-  
 րան՝ Ճաշու, Ա. Տենի և Իւղաբերից,  
 Ղերութեան Եղեսացի, Համառոտ  
 Ճարտասանութիւն, Սաղմոս՝ *հինգ*  
*տարբեր դիրքերով*, Մասքեոս  
 Ուոհայեցի, Միխայել Ասորի՝ *եր-*  
*կու անգամ տարբեր խմբագրու-*  
*թեամբ ձեռագիրներու վրայէ*,  
 Թուաբանութիւն Ս. Փափազեան,  
 Ուսումն Տրամաբանութեան, Բե-  
 րականութիւն Գաղղ. Ընդհանրա-  
 կան Թուղթ Շնորհալոյ, Կրթա-  
 րան ԱւեսարանականԲանից, Պատմ.  
 Հայ. Ս. Եկեղեցւոյ և Պատմ. Նոր  
 Կսակարանի. Մ. Վ. Մուրառեանց,

---

\*Այս թիւին մէջ են մէկէ աւելի անգամ-  
 ներ տպուած նման գիբերը:


Աւիսարհագրութիւն, Տիեզերագրութիւն և Պատմ. Հին Կսակարանի, Գարրիէլ Սարկ. Խապայեան, Կրքութիւն Գաղղ. Լեզուի, Կարգադրութիւն Առողջութեան, Խորհրդասէս, Ճառոց, Պատմ. Լեկ թիմուրայ, Ուսումնի Պարսուց և Համառօտութիւն Քրիստ. Վարդապետութեան, Պ. Շանչեանց, Կոր թուագիտութիւն, 2 հատոր Վ. Վրդ. Յակոբեան, Սանդուխտ Կոյս ողբերգութիւն՝ Քրանտ. Թարգմանութեամբ, Երկամեայ Պանդխտութիւն ի Հապեւստան, Կոյնին Քրքանսերէնը, Պատմ. Ս. Գրոց, Ե. Տնտեսեան, Խորհրդասէս, Ժամագիրք Ասեճի, Զայնֆաղ Շարական և այլն, և այլն :

1866 տարւոյ յունուարին կըսկըսի հրատարակուիլ Սիօն ամսա-

Թերթը խմբագրութեամբ Տիգրան Սաւալանեանցի, որ միեւնոյն ժամանակ կը վարէր քարտուղարութեան, ուսուցչութեան ու գիրքերու սրբագրիչութեան պաշտօնները: Սաւալանեանց առաջին երկու տարիները միայնակ կը խմբագրէ Սիօնը գրեթէ առանց աշխատակցի: Առաջին երկամեայ շրջանին լոյս տեսած համարներուն մէջ շահեկան են Խմբագրին տուած պատմական կարգ մը յօդուածները՝ Նեխաւեհայոց Պատմաբեւեռն դահանուր վերնագրին տակ:

Յառաջ կը բերեմ այստեղ Սիօնի սկզբնաւորութեան մասին Սաւալանեանցի տողերը, քաղելով իր անտիպ Պատմաբեւեռն երուսադեմիէն. «Յետ ի կարգի դնելոյ (Եսայեայ





† ՄԵԼ.Ք. Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆՅ  
Խմբագիր «Միօն»ի



Պատրիարքի) զԴպրանոցն կամ  
զՃեմարանն, ըստ սովորական ան-  
ուանակոչութեան Ս. Աթոռոյն,  
և բազմացուցանելոյ զգործաւորս  
և զաշխատութիւնս Տպարանին,  
կամելով նոր իմն ձեռնարկու-  
թեան սկիզբն տալ և լնուլ ըզ-  
բազմաժամանակեայ ակնկալու-  
թիւն ընդհանուր Ազգին, առա-  
ջարկէր իւրումն Քարտուղարի  
(Տ. Սաւայանեանցի) հրատարակել  
հանդէս մի ամսօրեայ: Յանձն  
առ նա և զայս ծանրութիւն,  
յանուն Միաբանութեանն վաս-  
տակեալ՝ փառաւոր առնել զպա-  
տիւ նորա առաջի Ազգին: Ամս  
երկուս (1866 և 1867) աշխա-  
տեալ նորա ի հրատարակութիւն  
Սիօնին, զի յայս անուն կոչեցաւ  
յիշեալ Հանդէսն գրական, յանձ-

հեաց հա ապա Միաբանութեան ,  
յորս կային յայնժամ բաւական ք  
ոմանք ի խմբագրել զայն :»

Սաւալանեանցէն վերջ Սիօնը  
խմբագրելու «բաւական» անձն էր  
Ղարապաղցի երիտասարդ մը՝ Գա-  
րեգին Մուրատեանց , որ կուսա-  
կրօնութեան սքեմ առնելու զի-  
տաւորութեամբ 1867ին եկած էր  
Երուսաղէմ և ժառ. վարժ.ին  
մէջ ուսուցչութեամբ կը պարա-  
պէր\* :

Մուրատեանցի խմբագրութեան  
օրով Սիօնի մէջ լայն տեղ կը  
տրուի ազգային , կրօնական ու

---

\*Մուրատեանց 1869 յունիս 21ին վարդա-  
պետ կը ձեռնադրուի Մելիսեդէկ անուա-  
նակոչութեամբ ու կը կարգուի վերաւե-  
տուչ նոյն վարժարանին :

բարոյական յօդուածներու, որոնք մեծագոյն մասամբ իր գրչէն ելած են :

Մուրատեանցէն վերջը իբրև խմբագիրներ ծանօթ են՝ Կիւրեղ Վրդ. Սրապեան (ապա եպիսկ.) և Գարրիէլ Սարկաւազ Խապայեան (այժմ Տ. Սահակ Կաթողիկոս Կիւիկիոյ) : Չկրցանք ճշգեղ վերջիններու խմբագրական պաշտօնին տեւողութիւնը, ինչպէս նաև ասոնցմէ զատ Սրօնի ուրիշ խմբագիրներու անունները, եթէ կային : Հանդէսը յանուն Միաբանութեան հրատարակուելուն՝ անոր մէջ յականէ անուանէ չէին յիշուեր խմբագիրները :

Սրօնի վերջին վեց տարուան հաւաքածոյին մէջ կայ Գարրիէլ Սարկ. Խապայեանէ ստորագ-

րուած բաւական թիւով յօդուածներու շարք մը՝ կրօնական, ազգային, բարոյական ու գիտական նիւթերու վրայ:

Սիօնին աշխատակցած են Միաբանութեան անդամներէն՝ Աստուածատուր Վրդ. Տէր Յովհաննէսեան (ճանապարհորդական նրկարագրութիւններ), Խորէն Վրդ. Միսիթարեան, Կարապետ Եազրճըեան՝ ապա Մամբրէ Վրդ. Մարկոսեան (բարոյական, առողջապահական, վիճարանական յօդուածներ ու քերթուածներ), Յարութիւն Սարկ. ապա Մովսէս Վրդ. Կէօմբիւքճեան (ոտանաւոր առակներ ու թարգմանութիւններ), Կարապետ Սարկ. Տեր Մինասեան (ազգ. կեանքէ յօդուածներ, առակներ ու քերթուած-

ներ), Մեկքոն Սարկ. Յակոբեան  
 և Գէորգ Սարկ. Իսմայէլցի (բա-  
 րոյական, գիտական յօդուած-  
 ներ ու թարգմանութիւններ),  
 և այլն: Ունեցած է արտաքին աշ-  
 խատակիցներ ալ սահմանափակ  
 թիւով: Բաւական ընդարձակ  
 տեղ տրուած է ժառ. աշակերտ-  
 ներու յօդուածներուն, ոտանա-  
 լորներուն, ինչպէս և նոր տար-  
 լոյ, վարդանանց ու դպրոցա-  
 կան հանդէսներու առթիւ անոնց  
 արտասանած ճառերուն, որոնք  
 մեծ մասամբ նոյնխմաստ կրկնու-  
 թիւններ են:

Գրութեանս ամփոփ սահմանը  
 չներեր Սիօնի պարունակած նիւ-  
 թերուն ու ընդգրկած ուղղու-  
 թեան վերլուծումն ընել, որ ըն-  
 դարձակ յօդուածի մը կը կարօ-

տի : Յանկացողները կրնան աչքէ  
անցնել անոր 12 տարուան (1866-  
1877) հաւաքածոն :

Եսայի Պատրիարք երբ մէկ կողմէ  
կարգէ դուրս ու անհաշիւ  
ծախքեր կընէր մասամբ յուժ-  
պէտս և մասամբ Միտրանու թեան  
վարկն ու մտաւոր մակարդակը  
բարձրացնելու բարի նախանձով ,  
միւս կողմէն սակայն չէր մըտա-  
ծէր ծախքերը հաւասարակշու-  
ւու համար և կամուտի հաստատուն  
աղբիւրներ ստեղծելու միջոցնե-  
րուն վրայ : Ասոր անխուսափելի  
հետեւանքը կրկնայ բարձր տոկոս-  
ներով մեծաքանակ պարտքի մը  
դոյութիւնը , որով և անտեսա-  
կան ծանր տաղնապի մը ուրուա-  
կանը կը սցուէ Պատրիարքին  
առջև : Ուր կը պակասին նիւթա-

կան միջոցներ, հոն կանգ կառ-  
 նեն սկսուած օգտակար ու գե-  
 ղեցիկ ճ'ուսարկները: Այսպէս ալ  
 ութսունական թուականներուն  
 սկիզբները խնայողութեան պէտ-  
 քը կստիպէ՝ ժառ. վարժ յի շրջանի  
 տարիները պակսեցնելով ու ծրա-  
 գիրը ամփոփելով՝ սեղմել անոր  
 պիւտճէն, փակել կուսանկարչա-  
 տունը և կասեցնել Տպարանի  
 գործունէութեան ընթացքը: Այս  
 է պատճառը, որ 1880-85 տարի-  
 ներուն, քանի մը դասագիրքերէ  
 ու տեսարակներէ գատ, կարելոր  
 հրատարակութեան մը չենք հան-  
 դիպիր: Բացառութիւն է Չայն-  
 ֆաղ Շարականը, որ 1884ին ա-  
 ռաջին անգամ խնամեալ տպագ-  
 րութեամբ լոյս կը տեսնէ Միւ-  
 հէնախսեանի մայրերուն վրայ


ձուլուած տառերով ու խաղերով ։  
 Տպարանի այս դանդաղութեան պատճառներ կրնան համարուիլ նաեւ՝ 1881ին Միաբանութեան անդամներու կարեւոր մէկ մասին Երուսաղէմէն հեռանալը, ոմանց նուիրակութեամբ և ոմանց՝ վանական ներքին խնդրի մը պատճառաւ, ինչպէս և կեդրոնի հետ համախորհուրդ Աթոռի պարտքին դարման մը դանկու համար 1882ին Պատրիարքին Պոլիս ուղեւորիլը, ուր կը մնայ մինչեւ 1885 և Երուսաղէմ դառնալէն քանի մը ամիս վերջը կը կնքէ իր մահկանացուն (օգոստ. 29) ։

Կարելի չէ ուրանալ՝ թէ Ս. Յակոբեանց Տպարանը Եսայի Պատրիարքի օրով բոլորած է գործունէութեան փայլուն շրջան մը,





ՍՍ.ՀՍ.Կ Վ. ԽՍ.ՊՍ.ՅԵՍ.Ն  
Խմբագիր «Միօնի»



մանաւանդ իր պաշտօնավարութեան առաջին տասնամեակին : Եթէ հանգ. Պատրիարքը իր օգտակար ծրագիրներուն միացուցած ըլլար նաեւ տնտեսագիտական տաղանդ, ապահովարար ամուր հիմերու վրայ դրած պիտի ըլլար ձեռնարկած գործերը ու կեանքի վերջին տարիներուն չպիտի տեսնէր իր օրով վանքին մէջ սկսուած գրական ու կրթական գեղեցիկ շարժումին տակաւ առ տակաւ թուլանալը : Այսու ամենայնիւ Տպարանը իր հիմակուան կազմակերպութեամբ պարտական է երջանկայիշատակ Պատրիարքի ջանքերուն և անոր անունը միշտ կապուած պիտի մընայ այդ Հաստատութեան հետ :

Եսայի Պատրիարքի վախճա-  
 նէն քանի մը ամիս վերջ իրեն  
 յաջորդ կրնորուի Տ. Յարութիւն  
 Արքեպ. Վեհապետեան, որ նոյն  
 տարին իսկ Կ. Պոլսոյ պատրիար-  
 քական դահը բարձրացած էր :  
 Վերջնոյս ընտրութեան ժամա-  
 նակ Երեսփ. Ժողովը պայման կը  
 դնէր չմիացնել երկու Աթոռները :  
 Նորընտիր Պատրիարքին Պոլսոյ  
 պաշտօնէն հրաժարելով մինչեւ  
 Երուսաղէմ վերադարձը վանքը  
 կը կառավարէ Տեղապահ Երեմիա  
 Արքեպ. Տ. Սահակեան, որուն  
 պաշտօնավարութեան մօտ քա-  
 ռամեայ տեւողութեանը Տպարա-  
 նէն կը հրատարակուին ժամագիրք  
 մտենին Բ. տղ. քանի մը թարգ-

մանու թիւներ՝ Գիրք բնութեան,  
 Բախս, Գիտութիւն գԱստուծոյ, դա-  
 սազիրքեր՝ Բնական Պատմութիւն  
 Սահակ Եպ. Մապայանի և Տարեւ  
 Ըրեցանութեան և կարգ մը եկե-  
 ղեցական մատենաներ:

Տ. Յարութիւն Պատրիարք Պոլ-  
 սոյ Աթոռէն հրատարէլէն վերջ  
 մօտ մէկ տարի Երուսաղէմ մեկ-  
 նումը կը յապաղեցնէ՝ վանական  
 ինչ ինչ խնդիրներու կարգադրու-  
 թեան և մասնաւորաբար Երուսա-  
 ղէմի պարտուց բարձման ի նը-  
 պատ զինուորական տուրքի յա-  
 ւելմամբ՝ Տէրութեան մըջոցով  
 հանգանակուած գումարին դանձ-  
 ման համար: Հասնելով Երուսա-  
 ղէմ 1889 մայիսին, կը ձեռնարկէ  
 պաշտօնին:

Մեր ծրագրէն դուրս է ներ-

կայացնել հոս Ս. Աթոռի վերջին  
Գահակալին Չ1 տարուան պատ-  
րիարքութիւնը՝ յարակից պարա-  
զաներով : Իբրեւ ժամանակա-  
կից ու ականատես այդ շրջանի  
ամբողջ իրադարձութեանց՝ նը-  
պատակ ունինք ի մի ամփոփել  
զանոնք և առանձին հատորով  
հրատարակութեան տալ, երբ ժա-  
մանակն ու պատեհութիւնը ներ-  
կայանան :

Այժմ դառնանք մեր Տպարա-  
նին :

Տ. Յարութիւն Պատրիարքի  
գահակալութենէն տարի մը վերջ  
լոյս կը տեսնէ Ատտուածատուր  
Եպ. Տէր Յովհաննէսեանի ժամա-  
նակագրական Պատմութիւն Ս. Ե-  
րուսաղէմին, բազկայեալ երկու  
հատորներէ, 464+560 էջերով :

Յաջորդ 1891 տարին Տպարանը կօժտուի արագատիպ անուանողարձ մամուլով մը, որուն վրայ առաջին անգամ կսկսի տպագրուիլ Թաղէոս Վ. Աստուածատուրեանի բազմատանջ ու համբերատար աշխատութեամբ պատրաստած Հին եւ Նոր կտակակարաններու Համաբարբառը 8 բունթօ տառերով, բաղկացեալ ԺԲ+1577 եռասիւն էջերէ։ Համաբարբառի Տպագրութիւնը կը տեւէ չորս տարի ու կաւարտի 1895ին։ Տպագրութեան վրայ կը ծախսուի 660 օսմ. ոսկի։

Իբրեւ նոր հրատարակութիւններ լոյս տեսած են 1892ին՝ Խըրիմեան Հայրիկի Հրաւիրակ Երկրին Աւետեացը Բ. տպ. սրբագրուած ու բարեփոխուած, 1895ին՝

Սակակ Եպ. Խապայեանի Բաղ-  
դասուքիւն սպագիր Սոկրատի եւ  
Երուսաղեմի Չեռագրին, 1896ին՝  
Քահանայաթաղը: Կարժէ յիշել  
Տեար Ծրէտէրիք Մուրատի Յայս-  
նուքեանն Յովհաննու հին հայ  
քարգմանութիւնը, էջ ՇԻԶ + 415,  
գլխնական հմտալից ներածու-  
թեամբ ու ճոխ ծանօթութիւն-  
ներով, գնահատուած ազգային  
և օտար բանասէրներէ\* :

Ասոնցմէ դուրս չկայ մատ-  
նանիշ ընելու արժանի նոր  
հրատարակութիւն մը, որովհե-  
տեւ Տպարանի գործունէութիւնը

---

\* Այս գործին սպագրութիւնը կսկսի 1905ին  
ու զանազան հանգամանքներու բերմամբ  
ձգձգումներու ենթարկուելով, կաւարսի  
1911ին:



կը սահմանափակուի եկեղեցական մատեաններու և քանի մը մանր մունր գիրքերու հրատարակութեան մէջ : Եկեղեցական մատեաններէն յիշատակութեան արժանի են Չայնֆաղ Շարական, Բ. տպ. 1895 և Ասենի ժամագիրք, Գ. տպ. 1899 :

Վերջին պատրիարքութեան շրջանին տպուած գիրքերը կը կազմեն 67 մեծ ու փոքր հատորներ, որոնք բաղդատելով նախորդ Պատրիարքի քսանամեայ շրջանի հրատարակութեանց հետ՝ վար կը մնան թէ՛ քանակով և թէ՛ որակով : Բայառութիւն են ժամանակագրական Պատմ. Երուսաղէմին, Համաբարբառը և Յր. Մուրաթի Յայտնութիւնը :

Այս երեւոյթը ունի իր պատ-

ճառները, զոր զանց կրնենք մի  
 առ մի յիշել: Այսքանը միայն  
 ըսենք՝ թէ Յարութիւն Պատ-  
 րիարքի գահակալութեան թուա-  
 կանէն սկսեալ գրաքննութեան  
 խստութիւնը կսկսի սաստկանալ  
 հետզհետէ: Արդեւքի տակ կառ-  
 նուին ժամանակագրական Պատ.  
 Երուսաղէմին ու կարգ մը ուրիշ  
 հրատարակութիւններ և տեղա-  
 կան կառավարութիւնը կը կազ-  
 մէ ցուցակ մը սահմանափակ  
 թիւով գիրքերու, որոնցմէ դուրս  
 չթոյլատրեն ուրիշներու ո՛չ տը-  
 պագրութիւնը և ո՛չ վաճառումը:  
 Հանգուցեալ Պատրիարքն ալ վեր-  
 ջին ծայր զգոյշ մարդ՝ չէր տ-  
 խորժէր կառավարութեան կաս-  
 կածն ու դիտողութիւնները հը-  
 րաւիրել Վանքին ու Միաբանու-  
 թեան վրայ:





† ՅԱԿՈՒԻ ԷՅ. ԱՇԼԳԵԱՆ  
Սառարող Տպարանի

Կառավարական խստութեան  
 վրայ գաղափար մը տալու հա-  
 մար յիշէնք հետեւեալ իրողու-  
 թիւնը : Երուսաղէմի փոխանորդ  
 հանգ . Սիմէոն Եպիսկոպոսի ձեռ-  
 քով Տպարանին համար ծախու-  
 կառնուի գրաձուլիչ նոր մեքե-  
 նայ մը , զոր Պոլսոյ մաքսատան  
 մէջ վար կը դնեն առարկելով՝  
 թէ հրացանի փամփուշտներ պիտի  
 ձուլուին ատոր վրայ : Մեքենան  
 ազատելու ու Երուսաղէմ դրկե-  
 լու ամեն ջանք ապարդիւն կանց-  
 նի և մինչեւ Օսմ . Սահմանադ-  
 րութեան հռչակումը՝ 14 տարի  
 մաքսատան մէջ կեցած տեղը  
 ժանդոտելով ու քայքայուելով՝  
 անպէտք ու անգործածելի կը  
 դառնայ :

Որքան որ Սահմանադրութիւնը

հետը կը բերէ մամուլի ազատու-  
թիւնը, բայց միաբանական ներ-  
քին յուզումներ հնարաւորութիւն  
չեն տար պէտք եղած ուշադրու-  
թիւնը նուիրելու Տպարանին ։  
Սակայն և այնպէս ազատութեան  
շրջանին բացի սովորական օրա-  
ցոյցներէն՝ կը տպուին 12 գիր-  
քեր, որոնցմէ յիշենք աւարտե-  
լու վրայ եղող Չայնֆաղ Շարա-  
կանը, Գ. տպ. Ս. կարապետի  
միաբան կարապետ Վ. Լուսա-  
րարեանի Գլակայ վանուց վանա-  
հայրերու Քաւազանագիրքը և Գ.  
Էօլմէզեանի Հայ աշխարհիկ լե-  
զուի Քերականութիւնը ։ Ամէնէն  
վերջը լոյս տեսաւ Սահակ Ծ. Վ.  
Աստուածատուրեանի Պատկերա-  
յոյց Հաւաքածոյի Բ. Պրակը (Ա. ը  
հրատարակուած Ա. Էջմիածին), որ

կը յուսանք թէ գնահատութեան  
պիտի արժանանայ իր բազմաթիւ  
նկարներու և տպագրութեան խը-  
նամեալ մաքրութեամբ :

Չմոռնանք յիշել՝ թէ Տպարանը  
կոնդակներու, հաշուեցոյցներու  
և դիւանական թուղթերու տը-  
պագրութենէն զատ կը կատարէ  
արտաքին յանձնարարութիւններ՝  
տպելով թուրքերէն, արաբերէն,  
ֆրանսերէն գրքոյկներ, ծանու-  
ցումներ, վիճակացոյցներ, տոմ-  
սեր, կառավարական պաշտօնա-  
տան զանազան ճիւղերու վերա-  
բերեալ գործեր և այլն և այլն :

Ներկայիս մէջ Տպարանը ունի  
տառերու 75 տեսակներ, որոնցմէ  
56ը՝ հայերէն, 12ը՝ լատինական,  
5ը՝ թուրքերէն, 2ը՝ երբայեցերէն  
և մայր տառերու 29 տեսակներ,

որոնցմէ 27ը՝ հայերէն ու 2ը՝ ճայ-  
նագրութեան խաղեր :

Քանի մը տարիներէ ի վեր խա-  
փանուած է Չուլարանը մեքե-  
նայի խանգարման և գրածուիչ  
չգտնուելուն պատճառաւ : Մի-  
ջոցներ ձեռք առնուած են քիչ  
ատենէն դնելու համար զայն  
գործնական վիճակի մէջ :

## Ժ

Ս. Յակոբեանց Տպարանը, ինչ-  
պէս տեսանք, առաջին օրէն ու-  
նեցած է իր մեկենասները, որոնք  
նուէրներով, կտակով, կամ գիր-  
քերու տպագրութեան ծախքերը  
հոգալով սատարած են անոր  
պայծառութեան ու զարգացման :  
Նուիրատուներն են ,



Զմիւռնացի Պետրոս Եռսու-  
ֆեան՝ փայտէ մամուլ մը և կա-  
պարեայ տառեր, 1830 :

Ակնցի մ'ի. Ալիքսան Եղիա-  
զարեան՝ վիմատիպ մամուլ մը,  
1833 :

Կարնեցի Խաչիկ Փաստըրմա-  
ճեան՝ մէկ պատկեր տպելու սի-  
լիսը, 1868 :

Աքիրմանցի Սողոմէ Տիկին Աս-  
տուածատուրեանց՝ կալուանա-  
ձուլման համար մէկ բռնի, 1881 :

Թալասցի Յակոբ Աշրգեան՝  
բացի նուիրած տպագրական մա-  
մուլէն ու Տպարանի յաւելուա-  
ծական մասի կցման ծախքէն,  
Երուսաղէմի մէջ իր անուան ե-  
ղած կալուածներու տարեկան  
հասոյթին 10<sup>0</sup>/<sub>0</sub>ը կտակով կը յատ-  
կացնէ Տպարանին, ի յիշատակ իր

ազգատոհմին դասագիրքերու հը-  
րատարակութեան համար\* :

Ներսէսեան Գերդաստան՝ ա-  
նուադարձ արագատիպամուլ մը  
1891ին, միջնորդութեամբ նոյն  
տարին Երուսաղէմի մէջ աքսո-  
րական հոգելոյս Խրիմեան Հայ-  
րիկի, ի յիշատակ 1877 փետր.  
7ին Գրիգոր Ներսէսեանի Եգիպ-  
տոս վախճանած 20 ամեայ Արամ  
որդւոյն, որուն մարմինը փո-  
խադրուած է Երուսաղէմ ու ամ-  
փոփուած Սիոնի ազգ. գերեզ-  
մանատան մէջ իր հաւին՝ մհի.  
Ներսէս աղային քով :

---

\*Կալուածներու արեկան հասոյթն է մի-  
ջին հաւուով 250 ոսկի, որուն 70 %ը յա-  
կացուած է ժ.առ. վարձ.ին եւ 20%ը՝  
իրենց նորոգութիւններուն :

Գիրքերու տպագրութեան ծախքեր հոգացած են .

Կարնեցի Կարապետ Մուրատեան՝ Մելք. վ. Մուրատեանցի նոր Կսակարանի Պատմութեան Ա. տպ. Բինկեանցի մհի . Կիրակոս Քարուկեանց՝ Մելք. վ. Մուրատեանցի Հայ. Եկեղեցւոյ Պատմութեան , 1872 :

Կալկաթայէն Սեթ Արզարեան՝ Միխայել Ասուրոյ ժամանակագրութեան Բ. տպ. 1871 :

Աղեքսանդրիայէն Աբրահամ փաշա Բարթող և Պօղոս պէյ Աշըղեան՝ Աստուածատուր Եպիսկ.ի Երուսաղեմի Պատմութեան , 1890 :

Կալկաթայէն Յովհաննէս աւագ քահանայ Սաչիկեան՝ ի նպաստ Համաբարբառ.ի տպագրութեան 100 անգղ. ոսկի :

Բաղիշեցի Անդրէաս Վ. Միր-  
զայեան՝ Քահանայաթաղի, 1896 :


Նոր Նախիջեւանէն պարսկահայ  
Դանիէլ Յովնանեանց՝ Ճանապարհ  
Երկնիցի Գ. տպագրութեան :

## ԺԱ

Տպարաններու պատմութեան  
մէջ կարեւոր պակաս մը թողուած  
պիտի ըլլար, եթէ չյիշատակուէին  
գործաւորները՝ այն խոնարհ ու  
համեստ աշխատաւորները, որոնք  
իրբեւ գրածուիչ, գրաշար, տը-  
պագրիչ ու կազմարար տպարան-  
ներու գոյութեան սիւներն են  
եթէ ըսենք, չափազանցած չենք  
ըլլար : Առանց ատոնց կիւթէմ-  
պէրկեան մամուլը ինչպէս պիտի  
կրնար բազմացնել ու տարածել



† ԵԳԻՊՏԱՅԻ ՏԻՐԱՅՈՒ ՅՈՎՍԷՓ  
Գրաշար



հեղինակներու աշխատութիւնները  
և ըլլար լուսատու ջահը մարդ-  
կութեան :

Ս. Յակոբեանց Տպարանի բազ-  
մաթիւ գործաւորներու մէջէն  
կրնանք յիշել Կիրակոս Պատ-  
րիարքի որդեգիր Եգիպտացի Տի-  
րացու Յովսէփը\* (ապա Տ. Յա-  
րութիւն Պատրիարք Վեհապե-  
տեան), որ երեսնական թուական-  
ներուն Ջանազանութեան երեք  
հատորներու ապագրութեան ժա-  
մանակ իրրեւ գրաշար աշխատած  
է Հին Տպարանին մէջ, իրեն ըն-

---

\* Յաւելուածիս մէջ դրուած պատկերը 1844  
ին նկարուած է Ամերիկայի մէջ:

Կը փափաքէին իրենց կարգին գետեղել  
Ջաֆարիա, Ադրիանուպօլսեցի Պօղոս եւ  
Կիրակոս պատրիարհներու պատկերներն ալ,  
բայց չկրցան գտնել դժբաղդաբար:

կերներ ունենալով Մարաշցի  
 Ճանսուղեան Խաչատուր Վրդ. ք  
 և Պոլսոյ Գարթալցի Եղիա Պա-  
 պան, Վերջինս գրեթէ 60 տա-  
 րիներ անընդհատ գրաշարը ե-  
 դած է Տպարանին և հակառակ  
 աւելի քան 80 տարիներու բե-  
 ռան՝ կը տեսնէինք իր մեղուա-  
 ջան աշխատութիւնը կ.քած տա-  
 ռասնտուկներու բջիջներուն առ-  
 ջեւ: Յիշենք նաեւ Եղիա Տըն-  
 տեսեանը, որ 1867-68ին Տպարա-  
 նին գրացուլիչը եղած է, միեւ-  
 նոյն ժամանակ ուսուցիչ ձայ-  
 նագրութեան և երաժշտութեան:  
 Հիմա Տպարանը ունի հինգ գոր-  
 ծաւորներ, որոնցմէ գրաշար Ե-  
 րուսաղէմցի Կարապետ Փոթու-  
 խեան և տպագրիչ ու կազմարար  
 Գպտի ազգաւ Մէլէք Ապու Հան-



նան <sup>9</sup> կը ծառայեն 47 տարիներէ  
ի վեր: Գրաշարապետն է Պոլ-  
սեցի Յարութիւն Պէյզատեան, որ  
անցեալ տարի բերուեցաւ Չայն-  
ֆաղ Շարականի տպագրութեան  
առթիւ:

## ԺԲ

Որքան կարելի էր աշխատե-  
ցանք այս ամիսի էջերուն մէջ  
թուղցիկ ակնարկով մը խտացնել  
պատմութիւնը Ս. Յակոբեանց Տը-  
պարանի ութսուն տարուան գոր-  
ծունէութեան, որուն արդիւնքը  
եղած է հրատարակութիւնը 300-  
է աւելի գիրքերու 159 տեսակ-  
ներով:

Երուսաղէմի Տպարանը առ հա-  
սարակ քննադատուած է իբր ար-

տատարող միմիայն եկեղեցական  
 — ծիսական գիրքերու : Յաւել-  
 լուածիս յարակից Յուցակին վրայ  
 հարեւանցի ակնարկ մը բաւա-  
 կան է հերքելու այդ կարգի քըն-  
 նադատութիւնները : Եթէ մեծ-  
 կակ տեղ մ'ալ տրուած է եկեղե-  
 ցական մատեաններու, կարեւոր  
 պէտք մը լեցնելու պահանջը տե-  
 ղի տուած է ատոր :

Հայ ազգը մեծագոյն մասամբ  
 փարած է սերտիւ իր Եկեղեցւոյն  
 ու Քրիստոնէական կրօնքին և  
 հոն կը փնտռէ հոգեկան կեանքի  
 սփոփանքն ու մխիթարութիւնը :  
 Քանի գոյութիւն ունի Հայ Ս. Ե-  
 կեղեցին, եկեղեցական — ծիսական  
 մատեաններն ալ պահանջ ըլլալէ  
 չեն դադրիր : Եւ արդէն Երու-  
 սաղեմի Տպարանը այդ կարգի

հրատարակութեանց մէջ իր շահէն աւելի նկատի ունեցած է միշտ գոհացում տալ այդ կարեւոր պահանջին :

Փորձով գիտենք՝ թէ Տպարանին վրայ որքան սուղի կը նստին Ասենի ժամագիրքի, Չայնֆաղ Շարականի, Ճաշոցի նման մեծածաւալ հրատարակութիւնները, որոնց սպառումը շատ դանդաղ կընթանայ և երբեմն վանքը կը պարտաւորուի չափազանց զեղչուած գիներով վաճառել աղքատիկ եկեղեցիներու և յաճախ ձրի տալ : Եթէ այդ գիրքերը իրական օգուտ մը բերէին, մեր կարգ մը հայ հրատարակիչները անոնց տըպագրութեան «մենաշնորհ»ը ապահովաբար չէին թողուր Երուսաղէմի, այլ իրենց կը վերապա-

հէին, փոխանակ կորզելու արդար  
իրաւունքը կենդանի հեղինակներու  
ընդդէմ և մեռածներու ժառանգներու  
ընդդէմ, կողմնակի ու միջին միջ-  
ջոյններով արտասուելով անոնց  
աշխատութիւնները:

Այս ազեղ երեւոյթին դժբախ-  
տաբար ականատես եղանք վեր-  
ջին քանի մը տարիներուն մէջ,  
ինչ որ տեղի տուաւ սեփականա-  
տէրերու իրաւացի բողոքներուն  
և հայ թերթերու կծու քննադա-  
տութեանց:

Ս. Յակոբեանց մամուլը, դա-  
ւառական մեկուսացած քաղաքի  
մը մէջ, ուր շատ անգամ կը  
պակսին հարկաւոր դիւրութիւն-  
ներ, ութսուն տարի շարունակ  
դառնալով մերթ արագ ու մերթ  
դանդաղ՝ տուած է միջին հա-

չուով 300,000է աւելի մեծ ու  
 պզտիկ հատորներ ինչ որ արհա-  
 մարհելի քանակ մը չկրնար ըլ-  
 լալ, ու ատով իրաւունք ստա-  
 ցած՝ համեստ տեղ մը գրաւելու  
 հայ տպարաններու խումբին մէջ:

Անոնք որ Մայր Աթոռի և Մը-  
 խիթարեան զոյգ Միաբանու-  
 թեանց արդիւնքը կականկալեն  
 իրմէ, պէտք է աչքի առջև ու-  
 նենան՝ թէ Երուսաղէմի Միաբա-  
 նութեան մեծագոյն մասին կո-  
 չումը եղած է Սուրբ Տեղերու  
 ընկերովի սեփականութեանց մըր-  
 ցումին մէջ ազգային բազմա-  
 դարեան իրաւունքներու արթուն  
 հսկողութիւնն ու գիշերաջան  
 տքնութեամբ ամենօրեայ երկա-  
 րատեւ ժամասացութիւններն ու  
 արարողութիւնները, և այն՝ դը-

ժուլարատար ու ծանր պայմաններու մէջ, դուրի ամէն յարմարութիւններէ, որ թէ՛ ֆիզիքական սպառում և թէ՛ ժամանակի կորուստ կը պատճառեն և հնարաւորութիւն չեն ընձեռեր նուիրուելու գիրքի ու գրականութեան :

Ասոր հետ մէկտեղ երբ բարեոք վախճանի մը յանգին տարիներէ ի վեր Միաբանութիւնը ընկճող ու տառապեղնող կարգ մը խրնդիրները և Առաքելական Ս. Աթոռին վրայէն վերնայ սուգիքօղը՝ ընտրութեամբ արժանաւոր Գահակալին ու Սնոր իմաստուն զեկալարու թեամբ Վանքը իր բնականօն խաղող վիճակն ստանայ, այն ատեն Ս. Յակոբեանց Ուխտը, կը յուսանք, պիտի կըր-

նայ ինքնամփոփուիլ ու իր սպար-  
տականութեանց համընթաց՝ քանի  
մը աստիճան աւելի մղում տալ  
կրթական ու տպարանական գոր-  
ծին :

Այս քաղցր յոյսով ու ակըն-  
կալութեամբ կը փակենք մեր  
սոյն համառօտ տեսութիւնը, ո-  
րուն նպատակն է, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ  
ՄԵԾ ՅՈՒՆԷԼԵՍՆԻՆ առթիւ, ամ-  
փոփ գաղափար մը տալ այն հա-  
մետ մասնակցութեան վրայ, զոր  
ունեցած է Երուսաղէմի Ս. Յա-  
կոբեանց Տպարանը 400 տարուան  
ազգային ընդհանուր տպարա-  
նական գործունէութեան մէջ :

ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՆՇԱՆԵԱՆ

Երուսաղէմ






# Յ Ո Ւ Յ Ա Կ

Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՏՊԱՐԱՆԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

1833 — 1913



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Աւետարան միջակ, Գ. տպ. 1898,  
էջ 343 :

Նոյնը՝ փոքրադիր, Բ. տպ. 1875,  
էջ 488 :

Աւետարան Ատենի, Բ. տպ. 1899,  
էջ 272 :

Աւետարան Իւղարեբից, Գ. տպ.  
1900, էջ 13 :

Աւետարան Ճաշու, Տօնադրոյցի Բ.  
հատորով միասին, 1868, էջ 275 + 83 :

Գործք Առաքելոց, միջակ դիրքով, 1868, էջ 438:

Նոյնը՝ փոքրագիր, 1876, էջ 580:

Զանազան Արարողութիւնք Ներուսադէմ ի Ս. Յակոբ, Բ. տպ. 1870, էջ 58:

Թագաւոր յաւիտեան Ս. Ստեփաննոսի, ձայնագրեալ, 1882, էջ 15:

Ժամագիրք առ ձեռն Գ. տպ. 1895, էջ 650:

Նոյնը՝ փոքրագիր, Բ. տպ. 1903, էջ 660:

Ժամագիրք Ատենի՝ Սաղմոսով եւ Տօնացոյցով միասին, Գ. տպ, 1899, էջ 563:

Խորհրդատեար Ս. Պատարագի, Գ. տպ. 1884, էջ 40:

Կանոն՝ յորժամ բարեպաշտօն ծնողք յանձնեն զզաւակս իւ-

րեանց ընդ զօրաւոր պաշտպա-  
նութեամբ Ս. Գլխաղբին, 1841,  
էջ 15:

Ճաշոց Գիրք Հայաստանեայց  
Ս.ու.ք. Ս. Եկեղեցւոյ, երկու հա-  
տոր, 1873, էջ 418+398:

Մաշտոց կամ Կանոն սրբազան  
արարողութեանց Ս. Եկեղեցւոյ  
Հայաստանեայց, Գ. տպ. 1901,  
էջ 510:

Մաշտոց կանոնեալ մկրտու-  
թեան, 1843, էջ 94:

Մաշտոց, Կարգ թաղման կար-  
գաւորաց (Բահանայաթաղ), 1896,  
էջ 300:

Նարեկ, միջակ գիրքով, Բ. տպ.  
1868, էջ 518:

Նոյնը՝ փոքրագիր, Գ. տպ. 1897,  
էջ 600:

Նոր Կտակարան (Ս. Եկեղեցւոյ և  
Գործք), 1867, էջ 800:

Շարական Զայնքադ, Գ. տպ. 1913, էջ 514:

Սաղմոս խոշորագիր, 1868, էջ 498:

Նոյնը՝ փոքր լինչ տարբեր դիրքով, 1869, էջ 375:

Նոյնը՝ միջակ դիրքով, 1873, էջ 364:

Նոյնը՝ փոքրագիր, 1870, էջ 413:

Նոյնը՝ ամենափոքր, 1874, էջ 511:

Վարժութիւն փոխասաց մանկանց, Բ. տպ. 1903, էջ 256:

Տեսրակ Ս. Յարութեան շարաթական թափօրաց, Գ. տպ. 1891, էջ 64:

Տեսրակ Ս. Յարութեան տարեկան թափօրաց, Բ. տպ. 1891, էջ 106:

Տաղարան Հայ. Ս. Եկեղեցւոյ, Գ. տպ. 1907, էջ 340:

Տօնացոյց, Ա. և Բ. հատոր, Գ. տպ. 1900, էջ 639:

### ՄԵԿՆԱԿԱՆ

Բացատրութիւն հրաժարման և զղջման, Մկրտիչ Վ. Արծրունեան, 1854, էջ 232:

Զանազանութիւն հինգ դարուց, հայատառ թուրքերէն, Ադրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարք, Երեք հատոր.

Ա. հատոր Գ. տպ. 1864, էջ 285.

Բ. » Գ. » 1867, » 520.

Գ. » Բ. » 1862, » 582.

Խորհրդածութիւն Ս. Պատարագի, Ն. Լամբրոնացոյ, 1842, էջ 191:

Մեկնութիւն թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս, Պետրոս Արքեպ. Բերդումեանց, 1850, էջ 804:

Մեկնութիւն Յայտնութեան ,  
 Թարգ . Ն . Լամբրոնացւոյ , 1853 ,  
 էջ 324 :

Մեկնութիւն Տէրունական Հայր  
 մեր աղօթից և Ճառք Խաչելու-  
 թեան , Թաղման և Յարութեան  
 և Խրատ միանձանց , Երանելւոյն  
 Ս . Եղիշէի Վրդ . ի , 1836 , էջ 82 :

Տեսութիւն Անթառամ ծաղիկ  
 Մեծացուսցէին , արարեալ Մեծի  
 Վարդանայ Վրդ . ի , 1834 , էջ 29 :

### ԿՐՕՆԱՐԱՐՈՅԱԿԱՆ

Աղօթագիրք Սրբազան Տեղեաց ,  
 Մամբրէ Եպ . Մարկոսեան , Գ . տպ .  
 1886 , էջ 120 :

Առաքինութեան ճամբան կամ  
 Մենտոր մանկանց և երիտասար-  
 դաց , Թարգ . Տ . Հ . Թ . Սաւա-  
 լանեանց , Գ . տպ . 1888 , էջ 324 :

Արձագանգ ողբերգութեան ի  
 Չարչարանս և ի Սաչելութիւն  
 Փրկչին մերոյ. Սաչ. Քա՛ն. Տ.  
 Վարդանեանց, 1884, էջ 66:

Բարոյական պատմութիւններ,  
 Թարգ. Ժառ. աշակերտաց, 1875,  
 էջ 399:

Գանձարան աղօթից, Գ. տպ.  
 1911, էջ 327:

Գիտութիւն զՍատուծոյ, Թարգ.  
 Տ. Հ. Թ. Սաւալանեանց, 1888,  
 էջ 171:

Գործ Ոսկեղինիկ, Սամուէլ  
 Ռարբի, Թարգ. Մելքիսեղեկ Դը-  
 սիբ, 1867, էջ 158:

Երեւոյթ կրից, Գրիգոր Վ. Կ.  
 Պոյսեղի, 1851, էջ 176:

Երկու խօսք Եկեղեցւոյ պաշ-  
 տօնէից ուղղուած, Մամբրէ Վ.  
 Մարկոսեան, 1872, էջ 179:

Եփրեմ Խուրի, Աղօթագիրք, Ե.  
տպ. 1901, էջ 496:

Ընդհանրական թուղթք Ներ-  
սիսի Շնորհալուոյն, 1871, էջ 334:

Թանգարան Խրատու, Պօղոս  
Պատրիարք Աղբիանուպոլսեցի, Գ.  
տպ. 1870, էջ 443:

Կեանքէ առնուած փոքրիկ  
պատմութիւններ, Մամբրէ Եպ.  
Մարկոսեան, 1891, էջ 242:

Կիպրիանոս, Աղօթագիրք, Գ.  
տպ. 1911, էջ 165:

Կիւրակէ կամ Տէրունական օր,  
Մամբրէ Եպ. Մարկոսեան, 1900,  
էջ 59:

Կտակագիր հոգեչա՛ս բանից,  
Մարգար Զ. Խոճենց, 1853, էջ 224:

Կրթարան Աւետարանական բա-  
նից, ութը տետր, Մելքիսեդեկ  
Վ. Մուրատեանց.



ա) Միմոն Պետրոս, 1871, էջ 56.

բ) Սամարային, 1871, էջ 54.

գ) Որդիք Աստուծոյ 1872, էջ 101.

դ) Աման անուշահոտութեան, 1875,  
էջ 47.

ե) Անտարբերութիւն կրօնական,  
1875, էջ 61.

զ) Արտասուք և Երգ, 1875, էջ 69.

է) Տաճարի քարերը, 1876, էջ 54.

զ) Հերմաս և Ռնեսիմ, 1876 էջ 55:

Հրահանգ կամ Ուսումնաբարուց,  
Փրանկիակոս Սուաւէի, Թարգ.  
Յովհ. Չամուրճեան, 1857, էջ 505:

Հրահանգ Սիրոյ, Յովսէփ վարժապետ Մալէղեան, 1870, էջ 132:

Ճանապարհ երկնից, Մանուկ  
վարժապետ կակոսեան, Դ. տպ.  
1907, էջ 299:

Ճառ Հաղորդութեան, Յովսէփ  
վարժապետ Մարաիրոսեան, 1860,  
էջ 76:

Ճառք և Խոստովանութիւնք  
հաւատոյ, արարեալ Սրբոց Հարց  
մերոց Գրիգորի Նարեկացւոյ և  
վարամայ վարդապետի, 1856,  
էջ 216:

Յովսէփ Գեղեցիկ, Իսահակ Ծ.  
վ., Տ. Գրիգորեան Գաղատացի,  
1849, էջ 358:

Ուխտ Հայրենասերի, Մելք վ.  
Մուրատեանց, 1874, էջ 58:

Պատասխանիք Մխլթարայ Քա-  
հանայի Սկեւռացւոյ, Բ. տպ.  
1860, էջ 70:

Սիրուն Զբօսարան, թարգ. Գը-  
րիգոր վ. Կ. Պոլսեցի, 1875, էջ 88:

Տեսչութիւն Հովուական, թրգ.  
Յովհ. Զամուրճեան 1867, էջ 336:

Տեսքակ Աղօթամատոյց վասն  
Գերմեռանդ աղօթատիրաց, 1833,  
էջ 16:

Քրիստոսի Չարչարանաց վրայ  
 Խորհրդածութիւններ, Աւետիա Վ.  
 Յովհաննէսեան, Բ. տպ. 1906,  
 էջ 171 :

### ՊԱՏՄԱԿԱՆ

Գաւազանագիրք—Յաջորդութիւնք վանահարց Ուխտին Ս. Կարապետի, Կարապետ Վ. Լուսարարեան, 1912, էջ 174 :

Եղիշէ վարդապետի՝ Վասն վարդանանց Պատերազմին, 1865,  
 էջ 431 :

Ժամանակագրական Պատմ. Ս. Երուսաղէմի, Աստուածատուր Եպ. Տ. Յովհաննէսեանց, 1890, Երկու հատոր, էջ 464+560 :

Ղերուբնայ Եղեսայի և Եսայի  
 Կաթ. Աղուանից, 1868, էջ 160 :

Համառօտ Պատմ. Երուսաղէմի  
և Ստորագրութիւն Սրբազան Տե-  
ղեաց, Խորէն վ. վանեցի Մխի-  
թարեան, 1867:

Մատթէոս Ուռնայեցի և Գրիգոր  
Երէց, 1869, էջ 598:

Միխայէլի Ասորոյ Պատրիարքի՝  
Ժամանակագրութիւն, Բ. տպ. 1871,  
էջ 622:

Յովհաննէս Կաթ.ի՝ Պատմու-  
թիւն Հայոց, Բ. տպ. 1867, էջ 464:

Պատմութիւն Լէնկ Թիմուրայ,  
Անմէտ Սրապչան, Թարգ. Աս-  
տուածատուր վ. Տ. Յովհաննէ-  
սեան, 1873, էջ 288:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչին  
մուխթասար Թարիխի, Պաղտա-  
սար Դպիր, Զ. տպ. 1909, էջ 112:

Սուրբ Յակոբ նամ իքի Առա-  
քեալարըն նագլի, Պրուսալը Տէ-

բոյէնց Յովհ. Բ. տպ. 1912, էջ 26 :

Վահրամայ Վարդ.ի Ատենա-  
դպրի Լեւոնի Արքայի՝ Բան ի  
Յայտնութիւն Տեառն և յՕժումն  
Լեւոնի Գ. Արքայի, 1875, էջ 59 :

Վարդանայ Պատմչի՝ Պատմ. Թա-  
թարաց, 1870, էջ 76 :

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Բաղդատութիւն Տպագիր Սոկ-  
րատի և Երուսաղէմի Ձեռագրին,  
Սահակ Եպիսկոպոս Խապայեան,  
1898, էջ 95 :

Համարարբառ Հին և Նոր կը-  
տակարանաց, Թաղէոս Վ. Աս-  
տուածատուրեան, 1895, էջ ԺԲ  
+1577 :

Յայտնութեանն Յովհաննու Հին  
Հայ Թարգմանութիւն — Ներա-

ծուլթիւն, Բնագիր և Ծանօթու-  
թիւնք, Ֆրէտէրիք Մուրատ, 1903  
—1911, էջ ՇԻԶ+415:

**ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ  
ՏԵՂԱՅ ՎԵՐԱԲԵՐԵՍԱԿ**

Բովանդակութիւն Ազգ. սեպ-  
հականութեանց, ընկերովի իրա-  
ւանց, արարողութեանց և սովո-  
րութեանց ի Տնօրինական Ս. Տեղ-  
դիւ, Բ. տպ. 1890, էջ 132:

Խնդիր Ս. Տեղեաց և նորա  
պաշտ. քննութիւնն, 1871, էջ 292:

Ուղեցոյց Սրբազան Տեղեաց,  
(Տ. Հ. Թ. Սաւաղանեանց) Զ. տպ. 1910, էջ 415:

Ստորագրութիւն Երուսաղէմի,  
Մկրտիչ Վ. Արծրունեան, 1859,  
էջ 353:

Տեղագրութիւն Երուսաղէմի,  
Տանվիյլ, Թարգ. Յովհ. Չամուր-  
ճեան, 1855, էջ 125:

Ճաւայի դէպք մը, որ պատահե-  
ցաւ Բեթղեհէմ Ս. Ծննդեան մեր  
եկեղեցւոյն մէջ, 1861, էջ 16:

Question sur la Propriété du  
Couvent Arménien de St. Jac-  
ques à Jérusalem. Carlo Gur-  
mani, 1867. pages 24:

### ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ

Անուրջք ի Սիօն, Մ. Թաթուլ,  
1869, էջ 44:

Երկու ստոխներ՝ Մարմինն ու  
Հոգին իրարու դէմ, Ա. Լեախա Վ.  
Յովհաննէսեան, 1911, էջ 63:

Հայելի վերաց, Պօղոս Քա-  
հանայ Էօտէմիշէի, 1852, էջ 220:

Հրաւիրակ Երկրին Աւետեաց,  
 Խրիմեան Հայրիկ, Բ. տպ. 1892,  
 էջ ԺԶ+159:


Տետրակ Գովասանաց ի վերայ  
 Տնօրինական Սուրբ Ուխտատե-  
 դեացն Քրիստոսի, բազմաթիւ  
 տպ. վերջինը՝ 1908, էջ 120:

### Վ Է Պ Ե Ր

Ազնէս, հայատառ թուրքերէն,  
 Թարգ. Յ. Քիւրքճեան, Գ. տպ.  
 1912, էջ 185:

Բախտ, Թարգ. Մ. Բուդա-  
 դեանց, 1887 էջ 363:

Հենրիկոս և Մարիամ, Թարգ.  
 Յովհաննէս Թ. 1870, էջ 109:





## ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Բանախօսութիւն աշակերտու-  
հեաց մէջ, Բ. տպ. 1874, էջ 80:

Գաղթիկ վերջին Ա. ք. քայ Հայոց  
Բագրատունի, Ս. Կ. Տ. Մինա-  
սեան (Վահան վ.), 1872, էջ 192:

Մեծն Ներսէս կամ Հայաստա-  
նի Բարերարը, Սարգիս Միրզա  
Վանանդեցի, Բ. տպ. 1887, էջ 86:

Սանդուխտ Կոյս՝ Ողբերգու-  
թիւն Հայկական, Ֆրանս. թարգ-  
մանութեամբ, Թովմաս Թերզեան,  
Թարգ. Օր. Մաթիլտ Բ. Ֆէրուհ  
Խան, 1881, էջ 238:

## ԳԱՍԱԳԻՐԲԵՐ

Աշխարհագրութիւն համառօտ,  
Գար. Սարկ. Խապայեան, 1874,  
էջ 364:

Բնական Պատմութիւն, Սահակ  
Եպ. Խապայեան, 1888, էջ 383:

Գիրք Խօսակցութեան Հայ-  
Տաճկ. Տէր Գրիգոր Ղ. Գ. տպ.  
1882, էջ 80:

Դասագիրք Ազգ. Պատմութեան,  
Ս. Պ. Փափաղեան, Գ. տպ. 1870,  
էջ 317:

Դասագիրք Ընթերցանութեան,  
Ս. Պ. Փափաղեան, 1869, էջ 224:

Դասագիրք Ժուազիտութեան,  
Ս. Պ. Փափաղեան, Գ. տպ. 1869,  
էջ 140:

Կրթութիւն Գաղղ. լեզուի—Հա-  
տուածներ Հայոց պատմութենէն՝  
Ժարգմանուած Քրանս, լեզուի  
Ժառ. աշակերտներէ, 1871,  
էջ 72:

Համառօտութիւն Գրիատ. ուս-  
ման Հայ Առաք. Ս. Եկեղեցւոյ,

Պետրոս Ս. Շանշեանց, Գ. տպ. 1879, էջ 199:

Հայ Բերականութիւն աշխարհիկ լեզուի. Գ. Մ. Անմահունի (Էօլմէզեան), 1913, էջ 139:

Հեղերէն, Սաղմոսի Ա. Կանոնը, վերջին տպ. 1881, էջ 56:

Նոր Դասագիրք Տիեզերագրութեան, Սահակ վ. Խասպայեան, Բ. տպ. 1884, էջ 255:

Նոր Թուագիրութիւն, վահան վ. Յակոբեան Ա. Հատոր, Բ. տպ. 1884, էջ 176:

Նոյնը՝ Բ. Հատոր, 1881, էջ 172:

Նոր Ճաշակ Դպրութեան կամ Համառօտ Ճարտասանութիւն, Եղիազար Մուրատեան, 1868, էջ 132:

Ուսումն Պարտուց, Պետրոս Ս. Շանշեանց, Բ. տպ. 1874, էջ 324:

Ուսումն Տրամաբանութեան,

Թարգ , Մեղքոն Պ . Փափազեան ,  
1869 , էջ 162 :

Պատմութիւն Հայ . Առաք . Ս .  
Եկեղեցւոյ , Մեղք . Վ . Մուրա-  
տեանց , 1872 , էջ 640 :

Պատմութիւն Հին Կտակարանի ,  
Սահակ Վ . Խաչապեան , Գ . տպ .  
1881 , էջ 340 :

Պատմութիւն Նոր Կտակարանի ,  
Մեղք . Վ . Մուրատեանց , Գ . տպ .  
1882 , էջ 340 :

Պատմութիւն Ս . Գրոց . Եղիա  
Տնտեսեան , 1867 , էջ 440 :

Տարերք . Ընթերցանութեան ,  
Կախակրթարանի ուսանողաց հա-  
մար , Մ . Պ . Հայկունի , 1888 ,  
էջ 216 :

Տարերք Իմաստասիրութեան  
Մեղքիօրայ , 1852 , էջ 179 :

Տրամաբանութիւն կամ Արուեստ

բանական, Գրիգոր Վարժապետ  
Փէշամալճեան, 1854, էջ 312:

Քերական Հայերէն, բաղմաթիւ  
տպ. վերջինը՝ 1906, էջ 32:

Քերական Հայ-Գաղղ. Բ. տպ.  
1882, էջ 75:

Քերականութիւն Գաղղիերէն  
լեզուի, Եղիազար Մուրատեան,  
1869, էջ 120:

Քերականութիւն Հայերէն լե-  
զուի, Կիւրեղ Վ. Սրապեան,  
1870, էջ 216:

Քրիստոնէական վարդապետու-  
թիւն, հանդերձ Արաբերէնով,  
1870, էջ 31:

### ԱՅԼՆԻԱՅԼՔ

Ամեն մարդոյ բարեկամ, Մամ-  
րրէ Վ. Մարկոսեան, 1873, էջ 192:

Անդրաշխարհեան Արձագանդ,  
Մ. Վ. Է. Վ. Ա. 1912, էջ 32:

Բառարան «Զանազանութեան»  
արարերէն և պարսկերէն բառե-  
րու, Աղբիւնութեան պոլսեցի Պօղոս  
Պատրիարք, Բ. տպ. 1881, էջ 35 :

Բողոք երկրորդ առ Ազգ. Ընդհ.  
Ժողովն, զոր խոնարհաբար մատու-  
ցանէ ամբողջ Միաբանութիւնն  
Ս. Երուսաղէմի, 1861, էջ 39 :

Գիրք Բնութեան կամ Հաւա-  
քածոյ սքանչելեաց աշխարհի,  
Թարգ. Օր. Մարիանէ Բասքալ,  
1886, էջ 176 :

Գրացուցակ Ս. Յակոբեանց  
Տպարանի, Գ. տպ. 1911, էջ 12 :  
Երազանան, Մ. Պապիկ, 1912,  
էջ 80 :

Երկամեայ պանդխտութիւն ի  
Հապէշստան, Տիմոթէոս Վ. Սափ-  
րիչեան, 1871, էջ 160 :

Նոյնին Քրանսերէնը, (Թարգ.

Տ. Հ. Թ. Սաւալանեանց), 1871, էջ 174:

Կանոն Միաբանական Ուխտին Սրբոց Յակոբեանց, 1880, էջ 43:

Նոյնը՝ վերաքննուած, 1888, էջ 36:

Կանոնադրութիւն Ընդհանուր Ժողովոյ Միաբ. Ուխտին Սրբոց Յակոբեանց, 1881, էջ 41:

Կարգադրութիւն առողջութեան, Գ. Աւետեան Չաքարեանց, 1871, էջ 262:

Կենսագրութիւն Փասկալայ, Թարգ. Մ. Ս. Ս. Ստեփանեան, 1869, էջ 94:

Հերքումն անիրաւ զրպարտութեանց և աղերս առ Ընդհ. բարեխորհուրդ Ազգ. Ժողովն, 1861, էջ 10:

Ճառք դպրոցականք, Ժառ .  
աշակերտաց . 1867, էջ 31 :

Պատասխանի ընդդէմ Տեառակի  
Հ. Ռէմիճիօ Պուզէլլիին, Տ . Հ . Թ .  
Սաւալանեանց . 1865, էջ 24 :

Պատկերացոյց Հաւաքածոյ մաս-  
նաւոր հնութեանց Մայր Աթոռոյ  
Ս . Էջմիածնի և շրջակայից, Պրակ  
Բ . Սահակ Մ . Վ . Աստուածատու-  
րեան, 1913, էջ ԺԶ+59 ,

Սիօն, ամսաթերթ, 12 տարուան,  
1866 — 1877 :

Օրացոյց, 48 տարուան, 1867—  
1914 :









